


Ch 7-1
Sh - 3

Ա. Պ. ԴՈՒԳՈՋԵՑԵԿ



ԱՌԱՋԴԻՆ
ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ
ՎԱԱՎԱԾ
ԶԻՌԻՆ

619
Դ-71

ԱՌԱՋ-ՍԵՎԱՎԱՐԵՆ ՅԵՐԱԲ. ՀՐԵԱՐԵԿՉՈՒԹՅՈՒՆ
ԴՈՍՏՈՎ-ԴՈՆ

1934

30 JUL 2010

9
1969
~~Փ Ա Հ Ա Յ Ի Ւ Թ Յ Ո Ւ Խ~~
~~1034~~

619
7-71

ԴԱԼԳՈՅԵՑՑԵԿ

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՆԱՍՎԱԾ ԶԻՈՒՆ

Թարգմ. և Շվարդ, յել Վ. Ավագյան

ԱԶԲՎ-ԱՆՎՈՐՎԱՆ
ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՄԱՆԿՉՈՒԹՅՈՒՆ
ԹԲՄՍԾՈՒ-ԴՈՒ - 1934

3 APR 2013

8459

ՆԵՐԱԾՈՎԱՆԻ ՓՈԽԱԲԵՆ

Կուսակցության XVII համագումարը, վորպես բոլշևիկյան միասնության և սոցիալիզմի մեծ հաղթանակների ասաջի համագումար ընդունեց, վոր գյուղատնտեսությունն այժմ կանգնած է սոցիալիստական ճիշտ ուղղու վրա:

Անասնաբուժության զարգացումը ներկայումս, ժողովրդական տեսեսության մեջ առաջնաները պրոբեմ ե հանդիսանեն: Իզուր չե, վոր ընկ. Ստալինն իր գեկուցման մեջ՝ լենինյան ամբողջ սրությամբ՝ մեր ուշադրությունը քենաց անասնաբուժության հարցի վրա, անողոք քննադատության յենթարկելով գյուղատնտեսության այդ ճյուղը, վերհանելով մի շարք հիմնական թերություններ:

Անասնաբուժական պրոբլեմը — դժվար պրոբլեմ ե: Անասնաբուժությունն ավելի հիվանդագին դրուժյուն ապրեց վերակազմության ժամանակաշրջանում: Յերկրորդ հնդամյակը նշեց անասնաբուժության վերելքի ու զարգացման այնպիսի թափ, վորը հիմնականում պետք ե ապահովի յերկրի աճող սուր պահանջը: Բնական ե, վոր այս բնագավառում հատուկ դժվարություններ կունենանք: Բայց այդ խոչընդունելով միամբամայն հաղթահարելի յեն:

«Այս փաստը, — ասում ե ընկ. Կույբիշևը, — վոր խորհրդային գյուղը հաստատ և վերջնականապես կանգնել ե սոցիալիզմի ձանապարհին և գյուղատնտեսության բոլոր ճյուղերի արագ զարգացման համար ունի բոլոր անհրաժեշտ նախադրյաները, այն փաստը, վոր մենք արդեն ստեղծել ենք անասնաբուժական խորհումների ուժեղ ցանց, վորոնք գործնականում տվել են աշխատանքի բարձր ցուցանիշներ, այն փաստը,

Դублетный фонд
госуд. библиотеки ССР
им. В. И. Ленина



4657 - 84

վոր մենք 1934 թվին արդեն ստեղծել ենք 130 հազար կոլ-
տնտեսային—ապրանքային ֆերմ և այնուհետև առաջ ենք շարժ-
վել՝ լուծարքի յենթարկելով կոլտնտեսականներին առանց կովի
թողնելու հարցը—այս բոլորը վկայում են նշած ինդիրների
միանգամայն գործնական լինելու մասին»:

Յեթե մենք որ որի վրա կազմակերպված աշխատենք, յեթե
մենք տարեց-տարի կազմակերպված և տնտեսապես ամրա-
պնդենք կոլտնտեսություններն ու խորհանտեսությունները և
այնտեղ ձեռնարկենք բոլցեիկյան կարգեր, լավացնենք աշխա-
տանքը, գործադրության մեջ զնենք զոտեխնիկան, դաստիա-
րակենք ակտիվին և ստեղծենք ուժեղ կարգեր, լավացնենք
աշխատանքի կազմակերպվածությունը և ամրապնդենք կարգա-
պահությունը, պարզ ե, վոր գործը ինքնըստիքնյան առաջ կդնա
և անամնաբուծությունը նոր վերելք կտանա ու կբարձրանա:

Անասնաբուծության ղարգացման համար պահանջվող բոլոր անհրաժեշտ նախապայմանները մեզ մոտ ստեղծված են, վորապեսզի 1934 թիվը հանդիսանաւ բեկման տարի, ամբողջ անհասնաբուծական տնտեսությունների վերելքի համար։ Գործի նետազարներացը կախված է մեզանից՝ կազմակերպվածությունից յև դեկավարությունից։

Հատկապես սուր ե դրված այսոր ձիու հարցը։ Կուսակցության կենտրոնը ձիու հարցին միշտ ել լուրջ ուշազբություն ե դարձրել, այն և՝ ձին պահպանելու, բազմացնելու, ձիուն լավ նայելու և աշխատեցնելու վերաբերյալ։

Այս գործով հարկավոր ե զբաղվել բոլշևիկորեն, ինչպես
հարկն եւ Հարկավոր ե ամբողջ լրջությամբ կպչել այն գործին,
վորի վրա սրեց մեր ուշագրությունը կուսակցության *XVII*
համագումարու:

Այս խնդիրը պետք է գառնա կուտանաեսությունների վարչությունների, բրիգադիրների և կուտանաեսականների, ինչպես և գյուղի կուսակցական և խորհրդացյին կազմակերպությունների լուրջ ուշադրության առարկան:

Ըստ իրենց ուշագլուխյան առավելաւթյան՝
Ըստ Ստալինին ասաց, վոր «անամնաբուծական գործը պետք
ե իրենց ձեռքն առնեն ամբողջ կուսակցությունը, մեր բոլոր
աշխատողները՝ կուսակցական և անկուսակցական, նկատի ունե-
նալով, վոր հիմա անամնաբուծության պրոբլեմը այնպիսի
առաջնահերթ պրոբլեմ է, վորպիսին յերեկ՝ արդեն աջողու-
թյամբ լուծված հացահատիկային պրոբլեմն եր»:

Ինչ կատկած, վոր գարնանացանի, ինչպես նաև գյուղատնտեսական դաշտավայրն աշխատանքների լիակատար հաջողություն-

Ները կախված են մեքենայական քաշող և կենդանի լծկան ուժի նպատակահարմար ոգտագործումից։ Կենդանի լծկան ուժը յրացնում և մեքենայական բառությունը:

Հողժողկոմատի ցանցում աշխատողներից վոմանք՝ մի ժամանակ ուղղակի բարիացակամ վերաբերմունք եյին ցույց տալիս այն «վասարար» թեորիային, «թե գյուղատնտեսության մեքենայացումը, տրակտորների, կոմբայնների արմատացումը կփոխարինի ձիուն, իսկ մեզ մոտ ապագայում նույնիսկ լիովին կագատի լծկանը գյուղատնտեսության մեջ ոգտագործելու անհրաժեշտությունից» (Վորոշիլով):

Ամենաուժեղ հականարվածը տալով վնասաբար «թեորիային», մեկ անգամ ընդմիշտ պիտի հիշել, վոր «մեր տերկրում, — ասում ե ընկ. Վորոշիլովը կուսամագումարում, — ձին այժմ և ետագայում խիստ անճրաժեշտ ե և հարկավոր, ինչպես նա հարկավոր եր և առաջ, յերբ մեզ մոտ արակտորները քիչ եյին. Զին վոչ միայն չի հակադրվում տակտորին, չի մրցաւմ նրա դեմ, այլ ընդհակառակը առ բանով նրան լրացնում, նրան ոգնում է»:

Մել յերկրամասում քիչ չեն այն կողմանտեսությունները, վորոնք գարնանացանի առաջամարտիկներ յեղան, զնորհիվ լըծկան անասունների լավ խնամքի և պահպանության: Ինչու վորովնետե նրանք ժամանակին մտածել են լծկանի դրությունը լավացնելու մասին, վերացրել են նրանց պահպանման գործում գիմագրկությունը և այլն:

Սակայն վերևում նշած կոլտնտեսությունների հետ միասին կան նաև այսպիսինները, զորոնք փոչ միայն յետ են մնում զարդարացանի ընթացքում, այլ և ցույց են տալիս զեպի ձին անտեսավարի և կոպիտ վերաբերմունքի այլանդակ որինակները. Դեռ ամերողջովին չի վերացել զիմազրկությունը, փորի հետեանքը լինում է լծկան անապահների վատթար դրությունը, մասնաւորապես ձիերի խնամքը և կոպիտ վերաբերմունքը:

Մինչև վոր արմատապես չփոխվի կոլտնտեսականների վերաբերմունքը դեպի լծկան ձին ու յեզը, կոլտնտեսությունները չեն կարող զարգացնել և ամրապնդել իրենց ձեռք բերած հաջողություններու:

Միակողմանի յեզրակացություն չանելու համար, պետք է իմանալ, վոր ձին հարկավոր ե վոչ միայն գյուղատնտեսության մեջ—գյուղում, այլ և արդյունաբերության մեջ—քաղաքում, արանսպորտում։ Չխռանակ գեռ այն մասին, վոր թե ներկայումս և թե ապագայում մեր Կարմիր բանակի համար կպահանջեն մեծ թվով յափ ձիեր։

Այստեղից լնդհանուր յեզրակացություն, վոր հարկավոր ե, ինչպես հարկն ե, զբաղվել ձիով, նրա պահպանմամբ և բազմացմամբ։ Սա ինչ ե նշանակում։ Սա նշանակում ե, վոր «ամենից առաջ անհրաժեշտ է մի անգամ ընդմիշտ վերջ տալ ձին մեմբնայով փոխարինելու, ձիու «մեռնելու» վնասարար «քերարիային»։ Անհրաժեշտ է մի անգամ ընդմիշտ վերջ տալ դիմագրկությանը ձիուն ոգտագործելու մեջ» (Վորոշիլով):

Զիերի բազմացման գործը պահանջում և պահպանել հղի մատակներին, նժույգներին և քուռակներին։

Դոլգոշենի «Առաջին ոգնությունը մասսամած ձիերին» բրոցուրի թարգմանությունը հանդիպեց վորոշ դժվարությունների մի շարք մասնագիտական տերմինների պատճառով (բույսերի, հիմանդրությունների, գեղերի անուններ և այլն):

Յելնելով վերոհիշյալ ինդիրներից և նպատակադրումներից, հրատարակում ենք այս գիրքը, վորը կծառայի իրեւ գործնական ձեռնարկ ձիու և ինամքի գործում՝ գյուղում աշխատող բրիգադիրների, ձիապանների, Կարմիր բանակում աշխատողների համար։

Դժվար ե, անշուշտ, ձեռնարկել զուար մասնագիտական գրքի թարգմանության, յեթե գեռնա չկա Նեակված տերմինալոգիա։

Հարկավ՝ լեզուն, այն ել ընթերցման լեզուն, պետք ե դուրս գա իր կարինետային շրջանակներից, ազատվի ճճռառն ֆուազներից, ամեն տեսակի թիված բառերից, վորոնք լայն մասսաների համար, առաջի հերթին կոլտնտեսականի համար, անծանոթ, խրթին են։

Մը դեմ միշտ ել և այժմս ել ուժեղ պայքար և տանսւմ կուսակցությունը՝ գիրքը ընթերցողին հասկանալի դարձնելու համար։

Ահա այս մարտական պահանջն ե, վոր մի շարք լուրջ խոշնդուների առաջ և կանգնեցրել թարգմանիչներին, անսամբլուծական բնապավառում մասնագիտական հաստուկ տերմենալոգիա գործածելիս։ Վերջինս՝ լինի այդ գեղերի անուններ, հիվանդությունների թե բույսերի անուններ, գործածվել են և գործածվում են գյուղական վայրերում տարբեր անուններ, տակ, տարբեր լեզուներով (ուռսերեն, թուրքերեն, պարսկերեն և այլն)։

Ի գեայ՝ գիրքը առաջի գլխից մինչև «Առաջին ոգնությունը ծննդյան ժամանակ» գլուխը թարգմանել ե ընկ. Վ. Շվարզը, իսկ վերջին մասը՝ ընկ. Վ. Ավագյանը։

ԱՐՈՂ ՅԵՎ ԱՇԽԱՏՈՒՆԱԿ ՁԻՈՒ ՀԱՄԱՐ

Գարնանացանի, ինչպես նաև բոլոր դաշտային գյուղատնտեսական աշխատանքների հաջողությունները, հատկապես նրանց կատարման ժամկետերը կախված են բացի այլ պայմաններից, նաև այն բանից, թե ինչ դրության մեջ են գտնվում կոլտնտեսության աշխատավոր անասունները և գլխավորապես ձիերը։ Զիերի քանակը պահպանելու և նրանց բարելավելու համար տարվող պայքարը — դա պայքար և կոլտնտեսային գաշտերի մշակման վորակը բարձրացնելու համար, կոլտնտեսականների կազմակերպչական անտեսական ամրացման համար, ունեվոր կյանքի համար։ Զուր չե, վոր կոլտնտեսային և խորհրդային իշխանության թշնամիները, հիանալի կերպով հաջի առնելու ձիուն համար։ Զուր չե, վոր կոլտնտեսային և խորհրդային իշխանության թշնամիները, հիանալի կերպով հաջի առնելու ձիուն համար, վորձում են առաջին հերթին քայքայել կենդանի լծկան ուժը։

Զին հանդիսանում է գյուղի գասակարգային պայքարի կարեւորագույն ճակատամասերից մեկը։ Կուլակի մասամբ աշխատանքն ունեցավ ծանր հետեվանքներ, հատկապես մեր յերկրամասի համար, յերբ նա ձիերի վոչնչացման նպատակով քայքայում եր նրանց խնամքի, կերպով հաջի առնելու ձիուն համար։ Զուր չե, վոր կոլտնտեսային և պահպանման գործը, և գիշատիչ կերպով ոգտագործում նրանց։

Այդ առթիվ ընկեր Շերողակը հետեւյալն ասաց կուտակցության 17-րդ համագումարում։ «Հյուսիսային Կովկասը շատ մեծ վնաս կրեց ձիերի հանակի նկատմամբ։ Իր ժամանակին մենք չկարողացանք ապահովել լավ խնամք, կազմակերպել հսկողություն ձիերի վրա։ Յեվ այժմ մենք չենք կարող պարծենալ, թե մենք ապրողովին վերջ ենք սկի լծկանի վաս դրույթանը»։

«Ընկեր Վորոշիլովը կուսակցության 17-րդ համագումարում արտասանած իր ճառում շոշափելով ձիաբուծության հարցերը, հատկապես ընդգծեց «այդ գործով անմիջապես յեվ բոլեվիկորեն զբաղվելու» անհրաժեշտությունը: Ընկեր Վորոշիլովն ամբողջ ուժով ընկավ նրանց վրա, ովքեր կարծում են, «թե զյուղատեսնության մեջնայացումը, տրակտորների յեվ կոմբայնների ենթածումը կփոխարինի ձիուն, իսկ մոտ ապագայում ամրողավիճ կազատի զյուղատեսնեսության մեջ կենդանի լծկան ոգտագործելու անհրաժեշտությունից»:

«Անհրաժետ ե նախ յեզ առաջ ընդմիւր վերջ տալ ձին մենայով փոխարինելու, ձիու «մահացման» վնասարար «տեսություններին» — ասում ե ընկեր Վորոշիլովը: — Ձին մեր յերեսում թե այժմ յեվ թե հետազում ել չափազանց անհրաժետ յեվ հարկավոր կիինի, ինչպես նա հարկավոր եր առաջ, յերբ մենք ֆիչ տրակտորներ ունենինք: Ձին վոչ միայն չի հակադրվում տրակտորին, չի մեցում նրա դեմ, այլ ընդհակառակը, նրան շատ բանում լրացնում ե, նրան ոգնում ե... Ձին հարկավոր ե վոչ միայն զյուղատեսնեսության մեջ, այլև արդյունաբերության մեջ, բաղադրում...: Առաջվա նուան ձին անազին նշանակություն ունի բանակի համար»:

Սուող, ուժեղ և տոկուն ձին մեծագույն արժնք ե ներկայացնում վոչ միայն կողմանտեսությունների համար, այլև խորհունակությունների ու մեր ամբողջ ժողովրդական տնտեսության համար: Ձիերի քանակի վերաճումը, նրա բարելավումը, նրա առողջացումը — զա այնպիսի գործ ե, վորին պետք ե ձեռնարկել ամբողջ յեռանգով և ամենաշտապ կարգով:

Շատ կարեվոր գործ ե ձիուն տուածին ոգնություն ցույց տալը, յերբ նա հիվանդանում ե: Այդ գործի վրա նույնական պետք ե լուրջ ուշագրություն դարձնել: Հաճախ, շնորհիվ նրան, վոր ձիուն խնամող մարդիկ չեն կարող ցույց տալ նրան իր ժամանակին ամենահասարակ, բայց շատ անհրաժեշտ առածին ոգնությունը, կենդանին կամ յերկար ժամանակ դուրս ե ընկնում շարքից, կամ վոշնչանում ե: Հասարակ ճանկովածքները, աննշան շարդվածքները բժշկել չկարողանալը, այս կամ այն վարակիչ հիվանդությունը կանխել չիմանալը հաճախ հասցնում են այն բանին, վոր ահազին քանակությամբ ձիեր կորվում են արտադրությունից, գժվարացնելով, իսկ յերբեմն ել վիժեցնելով այս կամ այն կարևորագույն աշխատանքների կատարումը:

Ձիերի խնամքի գործում զիմազգիկությունը վերացնելու հետ միասին, նրանց կերակրելու և պահելու վերաբերյալ բոլոր զու-

տեխնիկական (անասնաբուծական) կանոններն անցկացնելու հետ միասին անհրաժեշտ ե, վորպեսզի ձիերի հետ գործ ունեցող յուրաքանչյուր աշխատող կարողանա ցույց տալ առածին անհրաժեշտ ոգնությունը հիվանդ ձիուն և դրանով ապահովի ձիերի լրիվ, անարգել ոգտագործումը»:

Ներկա գրքի նպատակն ե ծանոթացնել ձիապաններին, հեծվորներին և բրիգադիրներին, նաև անասնաբուծական լիազորներին ու սանիտարներին ձիու ամենատարածված հիվանդությունների նշաններին և սովորեցնել թե ինչպես պետք ե ցույց տալ առածին ոգնությունը ձիերի հիվանդանալու դեպքում:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴԵՂԱՐԿՂ

Ձիերին, նույնական և մյուս կենդանիների հիվանդության գեպքում առածին ոգնությունը ցույց տալու համար յուրաքանչյուր կոլտնտեսություններում պետք ե ունենալ անասնաբուժական գեղարկղ, վորտեղից անասնաբուժը կամ սանիտարը կարող են անհրաժեշտ գեղեր ու գործիքներ մատակարարել անմիջապես արտադրական բրիգադներում աշխատող սանիտարներին, այսինքն՝ կազմակերպել բրիգադային անասնաբուժական գեղարկղներ: Կոլտնտեսային անասնաբուժական գեղարկղը պետք ե տեղավորվի առանձին սենյակում, վորտեղ պետք ե լինեն գեղեցն ու գործիքները պահելու պահարան, գեղերը կշռելու կշիռ մանր քարերով և մուտքն ու յելքը ցուցակագրելու տետր: Գարնանացանի կամպանիայից առաջ անհրաժեշտ ե հատուկ խնամքով ստուգել ու լրացնել բոլոր բրիգադային գեղարկղները, նրանցից ամեն մեկի համար հարմարեցնելով հատուկ արկղ, վորտեղ հարմար ե տեղափոխել գործիքներն ու գեղերը:

Ընդհանուր կոլտնտեսային և բրիգադային անասնաբուժական գեղարկղի գեղերի մոտավոր կազմն ու քանակությունը հետևյալն ե:

ԴԵՂԵՐԻ ԱՅՏՈՒՅԵՐԸ

Գլաուքերյան աղ (глазурововая соль)	15	Կիլոգրամ
Սովորական աղ	5	"
Բուսական յուղ	5	"
Անուշազրասպիրտ (нашатырный спирт)	2	"
Ցողի թուրմ (настойка иода)	1	"

Մալգանի-թթու կալիում	0,2	կիլոգրամ
Նավթալին	3	»
Բորակաթթու	1	»
Կաղնու կեղեկափոշի	5	»
Կրեռին կամ լիզոլ	20	»
Չտափած կարբոլիք	15	»
Բեկենի յուղ (սկոպիար)	10	»
Կուար (ձյութ, դեգոտի)	15	»
Կանաչ սապոն	10	»
Պղնձ-արջասպ (մեծանակ կուպորօս)	2	»
Ծծմբափոշի (սերա և պարոշե)	5	»
Քաֆրայուղ (կամֆորնա մազի)	1	»
Շիր (կասացի)	1	»

Գործիքներ յեվ վիրակապման նյութեր

Անասնաբուժային վիրահատման գործիքների ժողովածու	1 հատ
Անասնաբուժական ջերմաչափեր	1 հ. մի բրիգադում
Հոգնայի գավաթներ ունետինե խողովակներով (կրյակ և կլազմենիք և բարձրակամա) 1 » » »	»
Զիու յերախակալ (զենիկ ձևի լուսապատճեն)	1 » » »
Ռետինե ցրցան	1 » » »
Տրոպակար (տրոակար)	1 » » »
Ջուրսրսկիչ ախտահանման համար (սիդրուլիտ ձևի ձեզինֆեկցիա)	1 » » »
Խոնավագած բամբակ (բատի ցիցրոսկոպիչеской)	1 կիլոգրամ
Հասարակ բամբակ	1 » »
Քաթանե և թանգիփե յերիզոներ (ծինտուս ռա- բուստանական և մարլեանական)	50 մետր

Անասնաբուժը կոլտնտեսություն այցելելիս կարելի յե նրա
հետ խորհրդակցել, թե ինչպես ավելի լավ կազմակերպել դե-
ղակրոյ և վորտեղից ձեռք բերել անհրաժեշտ գեղեր:

ԱՌՈՂՋ ՁԻՌԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Առողջ ձիու տեսքը հայտնի յե ամեն մի ձիապանի, ամեն
մի ձիու խնամողի համար: Առողջ ձին ունի առույգ տեսք, մա-
զերը հարթ են, փալուն, դժվար են թափլում (յեթե ձին մա-
զերը չի փոխում): Յեթե առողջ ձիուն խնամող մարզը կան-
չում ե նրան, ապա ձին սովորաբար բարձրացնում ե գլուխը:
Առողջ ձին ախորժակով ուսում ե, ինչ կուլ ե տալիս, ինչ է

արտաքորում ե, քրիքը քանձար ե, առանց լորձունիքի կամ արյան
խառնուրդի, միզում ե առանց վարեվել լարվածության—մեզը
մուգ-դիենավուն գույն ունի: Նեչառությունը հանգիս ե, հա-
մաչափ, մի բոպեյում ներշնչում ե 8-ից մինչեւ 16 անգամ, աչ-
քերը մաքուր են, վոչ մի բարախակալում չի նկատվում: Առողջ
ձին ման ածելիս քայլում ե հարթ, չի կաղում: Յյուրաքան-
չյուր ձիու գրությունն, իհարկե, ամենից լավ գիտե ձիապանը,
յեթե նա մշտական ե և ուշազրությամբ ե վերաբերվում իր
գործին: Նա առաջինը կարող ե և պետք ե նկատի ձիու վար-
մունքում տեղի ունեցող փոփոխությունները: Նա առաջինը
պետք ե վորոշի, թե վոր ձին ե հիվանդ և այդ մասին հաղորդի անաս-
նաբուժին կամ անասնալիազորին, իսկ անմիջական ոգնու-
թյան անհրաժեշտության դեպքում, այդ ոգնությունը պետք ե
ցույց տա ինքը:

ՀԻՎԱՆԴ ՁԻՌԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Հիվանդ ձին շատ հաճախ կարելի յե տարբերել առողջից
մի շարք պարզ նշաններով: Նա անընդհատ քավալվում ե,
ախորժակը կորցնում ե, հազում ե, նրա փորն ուռած ե լի-
նում յեվ այն:


Բայց լինում են այնպիսի՝ սշաններ, վորոնք դժվար ե գո-
րոշել, վորովինետև հիվանդության սկզբում նրանք թույլ են նը-
կատվում: Մինչդեռ ամեն մի հիվանդություն պետք ե հայտ-
նաբերել հենց նրա զարգացման սկզբում: Այդ շրջանում միշտ
հեշտությամբ և մեծ ոգուտով կարելի յե ոգնել հիվանդ ձիուն
ու բժշկել նրան: Հիվանդության այդպիսի թույլ նկատելի
նշանները հետեւալիներն են—ձին բմբած ե ուռուս, յերեմին
կերը բերանից բափվում ե, փորում լսվում ե ուժեղ կրկոց,
բերանում էլիմբ ուռած ե լինուս (հասօս), բրիլում պատահում
են չմարսած հատիկներ. քրիքը նոտած ե, լորձունիքի կամ ար-
յան խառնուրդով յեվ հաճախ նեղուկային ե լինում, աչքերի
ու բարձր կապտած կամ դեղնած ե լինում, ձին կանգնում ե մի-
զելու, բայց չի միզում:

Այդպիսի անորոշ նշաններ շատ կարող են լինել, բայց մենք
կվերլուծենք նրանց, յերբ խոսենք առանձին հիվանդություն-
ների մասին: Վորոշած նշանները մեզ ոգնում են ճանաչելու
ձիու հիվանդությունը, և հետեւաբար ասում են, թե ինչպես
բժշկել:

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՎԵԼ ՀԻՎԱՆԴ ՁԻՌԻ ՀԵՏ

Զիուն առաջին ոգնությունը ցույց տալու և հենց զրանով նրա առողջությունն արագ վերականգնելու համար, նախ և առաջ անհրաժեշտ է իմանալ, թե ինչպես պետք է վարվել հիվանդ ձիու հետ:

Հիվանդ ձիուն պետք է մոտենալ հանգիստ, պետք եւ խոսել հետը և ձեռքով շոյել նրան: Զիուն պետք է մոտենալ կողքից կամ առջևից, վորպեսզի նա չխփի: Յեթե նայում են ձիու հետուցը, ապա բարձրացնում են նրա առջևի վոտքը: Այդ ժամանակ նա չի կարող խփել հետեւի վոտքերով: Յեթե ձին հիվանդությունից այնքան գրգռիչ է դառնում, վոր վոչ վոքի չի թողնում իրեն




Ինչպես անցկացնել վոլորակը

մոտենալ, այդ դեպքում պետք է վոլորակի ոգնությանը զիմել: Վոլորակը (закрутка)—զա վորքիկ փայտ եւ, վորի ծայրին ամրացած եւ պարանե կամ կաշվե ողակ այնպիսի մեծության, վորի միջով անցնում եւ մարդու ձեռքը Ողակը հացնում են ձիու վերին շրթունքին և փայտով վոլորում են այնքան, մինչև վոր շրթունքը սեղմում ե: Զին սեղմված շրթունքով հանգիստ կլանդնի, իսկ այդ ժամանակ կարելի յե նրան մանրամասն զննել, վերքը լվանալ, դուրս քաշել մեխը սմբակից և այլն: Խիստ պտտած վոլորակը չի կարելի յերկար պահել:

ԻՆՉՊԵՍ ՊԱՌԿԵՑՆԵԼ ՁԻՌԻՆ

Յերեքմն ձիուն նայելու կամ ոգնություն ցույց տալու համար, հարկավոր ե լինում անպայման պառկեցնել նրան: Դա պետք է անել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, վորովինետև անզգուշ պառկեցնելով կարելի յե վնասել ձիուն:

Զիուն պառկեցնելու համար յերկար պարանի ծայրին ողակ են անում անուրի (խօմս) մեծությամբ և հագցնում են նրա վիզը: Պարանի մնացած մասը պետք է գտնվի առջեկի ձախ վոտքի դրսի կողմում: Պարանի ծայրը փաթաթում են հետեւ աջ վոտին, հետո անց են կացնում ողակի միջով և ձրգում են մեջքի վրայով: Մի մարդ կանգնում ե ձիու աջ կողմը և քաշում ե հետեւ աջ վոտը, վորին փաթաթված ե պարանը: Յերբ հետեւ վոտքի պարանը ձգված ե, մյուս մարդը սանձի ծայրը ձգում ե ձիու վզիր աջ կողմը: Այսուհետև միասին, միան-



Ինչպես պառկեցնել ձիուն

գամից քաշում են սանձի ու պարանի ծայրերը և ձին ընկնում ե: Զիու ընկնելուց հետո հետեւ վոտքը քաշում են դեպի ողակը և կապում են մնացած վոտները: Սանձը քաշող ոգնականը պետք է ամուր սեղմի ձիու վլուխը գետնին և թույլ չտա, վոր ձին վլուխը խփի գետնին: Այն տեղը, վորտեղ ուզում են պառկեցնել նրան, պառկեցնելուց առաջ պետք է փռել ծղոտի հաստ շերտ, այդ դեպքում ձիուն վեասելու վտանգը կը չանա:

Յերբ հարկավոր ոգնությունը ցույց է տրված, այն ժամանակ ձիու վլուխն ամուր բռնելով քանզում են նրա վոտները, հետո թողնում են ձիու վլուխը և ձին սովորաբար ինքն խսկույն վեր և կենում:

ԱՐԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԲԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊԳՈՒՄ

ՍՏԱՄՈՔՍԱՅԻՆ ԾԱԿՈՑՆԵՐ (ԿՈԼԻԿԻ)

Ծակոցները ձիերի ամենատարածված հիվանդությունն եւ Ալդ հիվանդության եյությունը հետևյալն եւ փորի խոռոչում գտնվող գործարանների հիվանդության հետևանքով ձիու փորին սկսում եւ ուժեղ ցավել: Հիվանդացած ձին կամ վոտների վրա անհանգիստ շարժվում եւ, կամ հանկարծ թափալվում եւ, կամ ընկնում ու վեր եւ կենում, գլուխը շուռ եւ տալիս և նայում եւ փորին, ընդունում եւ անբնական դիրք, որինակ, շանպես նստում եւ հետեւ վոտքերին, չի կարող արտաթորել կամ դժվարությամբ եւ արտաթորում:

Սովորաբար ծակոցների ժամանակ փորկապ եւ ընկնում: Ծակոցների ժամանակ փորին ուռում եւ:

Զիու ստամոքսային ծակոցների պատճառները շատ են: Ամենահաճախ պատահող պատճառները հետևյալներն են— կերակրման կանոնների խախտումը, չափից դուրս կերակրելը, Զիու ծակոցներ՝ հիվանդացած ձին մեծ քանակությամբ դժվարամարս կերտալը (կենսապահ կեր),

փչացած կեր տալը (մզլած խոտը, մզլած և խոնավ վարսակ, փորը հեշտ ուռեցնող կեր, ինչպես կանաչ առվուտը, յերեքնուկ):


Ծակոցների պատճառը կարող եւ լենել նաև մըսելը: Զիերը մըսում են փոփոխական խոնավ յեղանակներին, սառը ջուր խմելուց, միջանցուկ քամուց, զարնանը և աշնանը գետերի ծանծաղուտներից անցնելիս: Ծակոցներ կարող են առաջանալ նաև այն ժամանակ, յերբ վարսակ կամ գարի (կենսապահ կեր) տալուց անմիջապես հետո նրանց բանեցնեն, փոխանակ կերակրելուց $1\frac{1}{2}$ —2 ժամ հետո: Վերջապես ծակոցներ կարող են լինել նաև նրանից, վոր յերկարատև աշխատանքից հետո ձին յերկար հանգստանում եւ առանց շարժողության:

Խնչպես կանխել ձիու ծակոցները: Դրա համար պետք եւ խմանալ նախ՝ ծակոցների պատճառները և նախագուշացման

միջոցներ ձեռք առնել նրանց դեմ — կերակրել ձիերին նորմայով, տալ լավ վորակի կեր, քրնած ձիերին ջրողնել միջանցուկ բառու տակ, կերակրելուց հետո նրանց խսկույն ջրանեցնել:

Ճատ ոգտակար եւ հանգստացող ձիերին թեկուզ մի քէչ ման ածել, դա կազմակի նրանց ծակոցների մեկ հավանական պատճառից և շատ ոգտակար եւ կերը կանոնավոր մարսելու համար:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ: Ծակոցները շատ վտանգավոր հիվանդություն եւ հարյուր հիվանդացած ձիերից վոչնչանում են 10—12: Դրա համար յեթե մոտակայքում կա անսամնաբուժ կամ բուժակ, պետք եւ ծակոցները հայտնաբերելու դեպքում անմիջապես դիմել նրանց ոգնությանը: Խոկ նրանց բացարձում անմիջապես դիմել նրանց ոգնությանը:



Խնչպես հոգնա անել

Կայության դեպքում յուրաքանչյուր ձիապան ինքը պետք եւ առաջին ոգնությունը ցույց տա:

Ամենից առաջ անհրաժեշտ եւ ձեռքով ազատել հետանցքը (ուղիղ աղիքը) արտաթորությունից: Դա հետեւյալ կերպ են անում: Թեվք վեր քշտելով, յուղում են ձեռքը վորեվե բուսական յուղով կամ վազելինով, զգուշությամբ կոխում են ուղիղ աղիքի մեջ և այնտեղից հանում են արտաթորանքը: Վորպեսզի ձին հետեւ վոտով չխիթ, նրա առջեկի վոտը բարձրացնում են: Այնուհետև պետք եւ մի բուռը խոտ կամ ծղոտ վերցնել և դրանով տրորել հիվանդ ձիու փորը: Լավ եւ տրորելուց առաջ փորին շաղ տալ ջրախառն սկիպիդար (մի լիտր ջրում 10 գգալ սկիպիդար): Տրորել 10—15 րոպե, և կես ժամից հետո նորից կրկնել: Յեթե կա հոգնայի գավաթ (կլազմենիայ կրյույսկա) պետք եւ հոգնա անել:

Հոգնայի գավաթը թիթեղից ե, վորի հատակին անց ե կացված խողովակը վերջինիով վրա հացնում են ռետինե յերկար թեփ, վորի մյուս ծայրին անց են կացնում ռետինե կամ փայտե ծայրոց։ Դավաթի մեջ լցնում են տաք ջուր, բարձրացնում են նրան ձիուց վերև և զգուշությամբ հետպետե ծայրոցը մտցնում են նրա ուղիղ աղիքը։ Քանի վոր բաժակը ձիուց բարձր ե բռնած, ջուրը հետզհետե լցվում ե ուղիղ աղիքը։ Ավելի լավ կլինի սապոնաջուր անել։ Հոգնան լավ ներգործելու համար, հենց վոր ամբողջ դավաթի ջուրը դատարկվի, հարկավոր ե ման ածել ձիուն, դրանից ջուրն ավելի յերկար կմնա աղիքներում և ավելի լավ կներգործի։ Մի անգամից ուղիղ աղիքը կարելի յել լցնել 6.-ից մինչեւ 10 լիտր ջուր։

Ծակոցներով հիվանդացած ձիուն պետք ե ման ածել, բայց չըշել և հետեւլի, վոր նա հանկարծ գետին չընկնի, վորովինետե դրանից նրա ներքին գործարանները կարող են մահացու վնաս ստանալ։

ՓՈՐԿԱՊՈՒԹՅՈՒՆ (Յառօր)

Փորկապության դեպքում ձին գժվար ե արտաթորում կամ բոլորովին չի արտաթորում։ Փորկապությունը կարող ե ծակոցների պատճառ դառնալ, վորն այդպես ել կոչվում ե—«փորկապության ծակոցներ»։ Ա-

մենից հաճախ փորկապությունը լինում ե սխալ կերակրելուց կամ նրանից, վոր ձին յերկար ժամանակ անգործ ե լինում։

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆՆ այն ե, վոր ձիու ուղիղ աղիքը մաքրվի արտաթորությունից, բացի այդ անպայման պետք ե հոգնա (ԿԼԱՅՄԱ) անել։ Յեթե դրանով փորկապությունը չանցնի, անհրաժեշտ ե ձիուն տալ 400 գրամ զլառքերյան աղ։

Վերջինս հետեւյալ կերպ են տալիս—կշռելով անհրաժեշտ քանակությամբ աղ, լուծում են նրան մի լիտր տաքացրտծ ջուրով, հետո առանցնելով լցնում են ամուր շիշի մեջ և այնտեղից լցնում ձիու բերանը։ Դրա համար ձիու գլուխը վեր են բար-

ձբացնում (բայց շատ բարձր չեն ցցում) և շնի վիզը դնում են ձիու բերանը կողքից, վորտեղ ատամներ չկան։ Պետք ե լցնել զգուշությամբ, առանց շտապելու։ Վոչ մի դեպքում չի կարելի թիթի մեջ ածել։ Յեթե զլառքերյան աղ չկա, ապա կարելի յե շնի մեջ բուսական յուղ լցնել։

ՓՈՐՀԱՐՈՒԹՅՈՒՆ (ՊՈԽԸ)

Փորհարության ժամանակ ձին սովորականից հաճախ ե ջրալի արտաթորում։

Փորհարությունը լինում ե սխալ կերակրելուց, գոմում պահելուց հետո անմիջապես կանաչ կերին անցնելուց, փչացած կերով կերակրելիս։ Յեթե նկատվում ե, վոր ձին փորհարություն ունի, անմիջապես պետք ե դադարեցնել կենսապահ կեր տալը, տեղափորել նրան տաք տեղում և կերակրել բացառապես լավ խոտոփ։ Մինչև ձիերին արոտ հանելը, հատկապես գարնանը, հարկավոր ե նրանց լրացուցիչ կեր տալ, վորպեսզի նրանք ագանությամբ չուտեն ջրալի կանաչ խոտը, վորը յերբեմն հանդիսանում ե ծակոցների և փորհարության պատճառ։ Յեթե փորհարությունը համառորեն շարունակվում ե, ապա ձին պետք ե տանել անասնաբուժարան, վորովինետե փորհարությունը կարող ե ձիու վորէվե լուրջ հիվանդության նշան լինել։

ՄԵԶԻ ԿԱՊՎԵԼԸ


Յերբեմն ձիերի մեզը կապվում ե։ Այդպիսի ձիերը հաճախ չուում են հետեւի վոտները և մեզելու դիրք ե բռնում, բայց չեն միզում, դադարում են կեր ուտելուց, ջուր խմելուց և որորվում են վոտների վրա։

Մեզը կապվում ե միզափամփուշում քարեր առաջանալուց կամ միզափամփշարի բորբոքումից։ Մեզի կապվելը հաճախ տեղի յե ունենում քուռակների մոտ, ավելի հազվագյուտ դեպքում կրտած ձիերի մոտ և շատ քիչ դեպքում—մատակ ձիերի մոտ։

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆՆ այն կլինի, վոր զգուշությամբ տրորել միզափամփուշը։ Դա արվում ե հետեւյալ կերպ։ Յեփք վեր բշտելով և ձեռքը բռնական յուղ, վազելին կամ անպան քսելով մայնում են ուղիղ աղիքը, ապատում են նրան արտաթորննից և թեթևորեն շփում են ուղիղ աղիքի ներքեվ։ Հասկը ձեռքի



Դեղն ինչպես լցնել ձիու բերանը



Մեղր կտորի դեպքում միզափամփուշտի շփումը

ափն աչ ու ձախ շարժելով։ Շատ հաճախ դա արդին միանգամայն բավական է, վորպեսզի ձին ստիպված լինի միզել։ Յերբեմն խորհուրդ են տալիս ձիւ համար աննկատելի կերպով, թեյամանից կամ դույլից ջուրն այնպես թափեր վար ու կարկաչի. լսելով ջրի ձայնը, ձին ոկտում ե միզել։

ՀԱՅ

Յեթե միանգամից սկսեցին շատ ձիեր հազար, ապա պետք է նայել խոտը։ Վորոշ դեպքերում հազը լինում է փոշոս խոտից։ Փոշին առաջանում է խոտն իր ժամանակին հնձած չլինելու պատճառով և գառնում է փշրամք։ Առանձնապես վատ, գրգոր փոշի գոյանում է խոնավացած, մղլած և նետ չորացած խոտից։ Այդպիսի կեր ու տելու ժամանակ, ձիերը շնչելիս՝ խոտի փոշին մտնում ե նրանց կողորդը, զրգում և հազ և առաջացնում։ Իսկ յեթե խոտը լավն է, բայց և այնպես ձիերը հազում են, դա կարող է և մրսելուց լինել։ Յերբեմն ձին հազում է ջուր խմելիս, և ջրի մի մասը դուրս է գալիս նրա քթից։ Դա լինում է, յերբ կոկսրդը մրսելուց հիվանդանում է։


Հազն ինքը հիվանդություն չե, այլ միայն հիվանդության նշան է։ Բացի վերոհիշյալ դեպքերից, հազը լինում նաև շնչափողի ու թորերի բորբոքման դեպքում։

Հազացող ձիուն պետք է տեղափորել տաք շենքում, տալ նրան լավ, դյուրամարս կեր. սառը ջուր չտալ և պահպանել մրսելուց։ Յեթե հազի հետ միասին ջերմությունը բարձրանում է


(40 աստիճան), շնչառությունն արագանում ու դժվարանում է, ապա կրծքի վանդակը պետք է շինել բնեկնի լուղով (սկիպիդարով), նետ բռնական յուղով, ծածկել փաթաթանով և ձին անմիջապես ուղարկել մեկուսիչը։

ԲՈՒՅՍԵՐԻՑ ԹՈՒՆԱՎՈՐՎԵԼԸ

Շատ ձիերի մոտ, կերակրելուց հետո, նկատվում է հանկարծակի թքահոսություն, փրփրահոսություն, փորհարություն, ուժեղ զրգիս (ձին կարծես «կտապել ե»), ամբողջ մարմինը զողում է, յերեվում են ծակոցների նշաններ։ Զիերը թու-



Ասողածաղիկ (звездчатка)



Թունավոր ընձափուլ (лютик ядовитый)

նավորվում էն կերի մեջ պատահմամբ ընկած կամ թունավորելու նպատակով կերի մեջ դիսմամբ զրած թունից, կամ վերջապես թունավոր բույսեր ուտելուց։ Վերջին դեպքում թունավորումն առաջանում է վոչ միայն թարմ կանաչն ուտելուց, այլ և խոտից, վորոխետև շատ վնասակար բույսեր իրենց թունավոր ույժը պահում են նաև չորացած վիճակում։ Լինում է գեպքեր, յերբ բոլորովին անվասա բույսերը զառնում են

վասակար, որինակ, հնձից հետո աշնանը բուսած կանաչը սորդոն կամ մղլածությամբ ու փոշեմնկով հիվանդացած բույսերը:

Թունավորումը կանխելու համար բրիգազիրը և ձիապանը պետք է ճանաշեն թունավոր բույսերը: Աղով-Շեվծովյան և Հյուսիսային կովկասի յերկրամասերում պատահում են հետեւյալ թունավոր բույսերը, վորոնցից կարող են ձիերը թունա-



Չիաձետ (железница)

Սպիտակ կոճղաբույս (чемерица белая)

վորվել—աստղածաղիկ, սպիտակ կոճղաբույս, ձիաձետ (վորուն) և այլն: Ամենատարածված թունավոր բույսերն ընձախոտի (լյուտիկ) ընտանիքին են պատկանում, մամնավորավես—բեշտ, մոմախոտը և մլուսները: Դա պետք է հատկապես հիշել, վորպեսզի գասակարգային թշնամին, վորը հաշվի յե առնում այդ բույսերի տարածված և շատ թունավոր լինելը, չկարողանա նրանց ոգտագործել խոտը փշացնելու համար:

Թունավորվածությունը հայտնաբերելու դեպքում կերն անմիջապես պետք է վերացնել, վորպեսզի մյուս ձիերը չթունա-

վորվեն: Թունավորված ձիերին պետք է տալ մի մի շիշ բուսական յուղ կամ 2—3 շիշ վուշի խաշած սերմերի ջուր: Յեթե չկա վոչ մեկը, ապա լավ է տալ 2—3 շիշ կաղնու խաշած կեղեվի ջուր, վորը պատրաստվում է այսպես՝ 50 գրամ կաղնու կեղեվափոշու վրա լցնում են 2—3 շիշ յեռացրած ջուր, սառեցնում են, քամում են շորի միջոցով և տալիս են ձիուն:

ԱՐԱԶԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱԲԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՂԳՈՒՄ

ԱՐՅՈՒՆԱՑՈՒԽՅՈՒՆ (կրուտենիոն)

Չիու մարմնում արյունը հոսում է արլունատար անոթներով, ինչպես մարդու մեջ: Այդ անոթները լինում են մեծ յեզ փոքր: Յերբ ձին վիրավորվում է, այդ անոթներ պատռվում են և արյունը նրանցից հոսում է: Արյուննոսության ուժեղացումը կախված է նրանից, թե ինչպիսի անոթներ են վասակած—մեծ թե փոքր: Յեթե վասակած են մակերեսի մանր անոթները, տպա արյունը ծորում է ամբողջ վիրավորված մակերեսից: Խոշոր անոթների վասակելու դեպքում արյունը դուրս է ցայտում վերքից շատ ուժեղ կերպով:

Արյունը մարմնի ամենակարեվոր և անհրաժեշտ մասն է: Այդ պատճառով արյունը կորցնելիս ձին թուլանում է, իսկ արյան մեծ կորուստի զեպքում նա կարող է և վոչնչանալ: Հետևաբար ամեն մի արյուննոսություն անհրաժեշտ է, ինարավորին չափ, շուռ կանգնեցնել: Ինչպես անել: Յերբ արյուննոսությունը փոքր է, պետք է վերքի ծալրերն իրար սեղմել և կապել իսկ յեթե դա չոգնի և արյունը չկանգնի, ապա պետք է սառեցնել ջրով, ձյունով կամ սառույցով: Արյան խոշոր անոթների վասակելու դեպքում, յերբ արյունը վոչ թե քամփում է, այլ մեծ քանակությամբ գուրս է ցայտում, պետք է վերքի վերեվի կողմից պինդ կապել սրբիչով կամ քաթանել յերիգով (նահտօմ) կամ մաքուր ամուր շորով յերկու-յերեք տակ վաթաթթել: Դա շատ լավ միջոց է, բայց կարելի յե գործածել միայն վոտների արյուննոսության գեպքում: Յեթե ուժեղ արյուննոսությունը տեղի յե ունենում մեջքի կամ դավակի վրա և կապոցով ու սառույցով հնարավոր չե գտղարեցնել, ապա այդպիսի վերքը կարելի յե այրել սպիտակության աստիճանի շիկացած յերկաթե կտորով:

Կարելուց, ծակելուց կամ վրա և առարկայով հարվածելուց ձիու վրա վերքեր են գոյանում: Վերքերը կարող են լինել վտանգավոր և քիչ վտանգավոր: Յերբ վերքը մեծ և է գտնվում և փորի վրա—այդ վերքը վտանգավոր է. այդպիսի վերքի ժամանակ հնարավոր և փորում գտնվող աղիքների ու մյուս զործարանների վտանգավոր են նայել կրծքի ու պիսի մեծ և խոր վերքերը: Կրծքում տեղափորփած են շատ կարելոր գործարաններ՝ թոքերն ու սիրող, իսկ զլխում՝ ուղեղը, վորոնց ամենաշնչին կերպով վտանգելու դեպքում ձին կատակի: Վտանգավոր են այն վերքերը, վորոնցից արյունն առատորեն հոսում և գուրս ցայտելով: Պակաս վտանգավոր են մակերեսային, վոչ խորը վերքերը: Բայց պետք է լավ հիշել, վոր մինչև անգամ ամեն մի անհշան, ամենափոքր վերք կարող և դառնալ ձիու համար մահացու, յեթե վերքին դիմում կեղաստ ձեռքերսկ, սրբեն կեղաստ շորով կամ վորքի վրա դնեն սարգի փոստայն ու հոգ: Դրանց գնելով վերքը թարախակալում է. կարող և արյան վարակում առաջանալ, ամենաշնչին վերքից ձին կատակի, մինչդեռ բավական կլիներ այդ վերքի վրա յոդ քսել և նա շուտով կավանար:

Մակերեսային վերքը հարկավոր և լվալ տաք ջրով, հեռացնել նրանցից ամբողջ կեղաստ և յոդ քսել: Ամառը վորպեսպի վերքի վրա ճանձեր չնատեն, ցանում են շիբի և նավթալինի կեսակես խառնած փոշի կամ այլ բուրավետ զեղեր, որինակ, յոդափորմի և կաղնակեղեվի փոշու խառնուրդ (մի մասը 10 մասի հետ): Թարմ ծանր վերքի շուրջը խուզում են մազը, վերքը լվանում են տաք ջրով, մաքրում են կեղտից, լավ ստուգում են, թե արդյոք կտորներ կամ փշրանքներ չեն մնացել այն առարկայից, վորսվ վերք են հասցել և նկատելու դեպքում հեռացնում են: Յերբ արյունհոսությունը կանոնում է և վերքը մաքրված է, յոդ են քսում և մաքուր յերիզով կապում են: Յեթե վերքն այնպիսի տեղումն է, վոր դժվար և կապել (զավակը, թիակը, փիզը), ապա բաց են թողնում և ամառը հետեւում են, վոր ճանձերից վերքում վորդեր չառաջանան: Դրա համար վերքի վրա ժամանակ առ ժամանակ ցանում են վերոնիշյալ վեղերը:

Թարախակարգով վերքը պետք է ամեն որ լվանալ կարբուրայի կամ կրեոլինի լուծույթով (մի լիտր ջրում 2 գդալ): Այդ լուծույթների փոխարեն կարելի յե գործածել մարդանի—թթու

կալիում: Մի լիտր ջրում խառնում են դանեակի ծայրով առած մարդանի—թթու կալիումի փոշին: Վերքը դադարում են լվանալ, յերբ դադարում և թարախանոսությունը:

Յեթե վերքը ծածկվում և կեղեվով և նրա տակ թարախ չկա, ապա այդպիսի կեղեվը չպետք է պոկել, վորովինետե 10—12 որից հետո վերքը կլավանա:

Զիրին վերքերից պահպանելու համար պետք է նայել, վոր գոմերում, դոների վրա և այլ տեղերում մեխեր, մետաղալարեր և այլ սուր առարկաներ չցցվեն: Շատ կույարար ձիրին պետք և առանձին պահել նրանք հաճախ կծելով և սրածայր ողայտերով հարվածերով մյուս ձիրին, մեծ վերքեր են առաջնում:

ՀԱՐՎԱԾՆԵՐ (ԿԱՅՑ)

Զիու հարված ստացած տեղում, ինչպես հայտնի յե, առաջանում և տաք ուռուցք՝ ցափի հետ միասին:

Այդպիսի ուռուցքի գեսքում առաջն ոգնությունը կլինի սառեցնելը—ջարդված տեղի վրա ձյուն կամ սառուց գնելը, Ամառը, յերբ ձեռքի տակ սառուց չկա, ջարդվածքը պետք է ծածկել չորով կամ պարկով և ժամանակ առ ժամանակ սառը ջուր ածել: Կարելի յե նույնպես ջրի մեջ լուծել կավ (վոչ թանձը) և հաճախ քսել հարվածած տեղը: Յեթե հարված հասցեացնելը առաջանալ կեղեւում ասվեց: Այդպիսի դեպքում կարելի յե սառեցնելու միջոցի դիմել: Բայց աղատ չի կարելի կավ քսեր, վորովինետե կա կարող և կեղաստել վերքը և բարդություն առաջացնել:

ՃՆՇՈՒՄ (ԽՈՂՆԵ)

Յերբ ձիասարքը վաս և հաղպրած—անուբը, թամբը մեծ կամ փոքր են, ձիու մարմնի գանազան մասերը, մեջքը քսվում են և արորիվում: Սկզբում ասաջանում է կողա ուռուցք, վորը հետո աստիճանաբար փափկանում է, առաջանում են անցքեր, վորոնցից ել սկսում և թարախ հոսել: Այսուղի գոյանում է այն, վորին ասում ենք ճնշում:

Ճնշումը սովորաբար յերկարատեկ հիվանդություն է, պրահամար պետք և նրա դեմ խիստ նախազգուշական միջոցներ պահպանել: Պետք և խիստ հետեւել, վորպեսպի յուրաքանչյուր

ձիու սարքը լավ հազցված լինի: Դա կարելի յե անել միայն այն ժամանակ, յերբ յուրաքանչյուր բրիգադից, յուրաքանչյուր ձիու բակից կվերացվի զիտաղը կությունը և յուրաքանչյուր ձիուն ընդմիշտ կամրացվի փորոշ թվով լծասարք:

Անուրի (Խօմոյտ) կամ թամբի տակ ուռուցք հայտնաբերելիս, վարդում են այնպես, ինչպես հարվածի ժամանակ: Պարկի մեջ ձյուն կամ սառույցի կտորներ տեղափորելով, դնում են ցաված տեղը և մի քանի ժամ պահում: Իսկ յեթե ուռուցքը ամառ ժամանակ ե պատահել և նրա վրա ճմլված կամ վիրավորված տեղեր չկան, քսում են ջրալի կավ, վորը հաճախ թրջում են ջրով, վորպեսզի վերքի վրա չչորանա: Ուռուցքի վրա վերքեր լինելու դեպքում պետք ե կապել մաքուր շոր, նույնպես հաճախ թրջել սառը ջրով: Անխնամ թողած ճզմվացքներ ունեցող ձիերը դժվար են բժշկվում, նրանց պետք ե անպայման տանել անամսաբուժարան: Այդպիսի ձիերին բժիշկները սովորաբար վիրահատության են յենթարկում և հեռացնում են բուրը մեռած և նեխած մասերը, վորից հետո միայն սկսվում է վերքն առողջանալ:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՍԿՈՐՆԵՐԻ ԶԱՐԴՎԱԾՔԻ ԴԵՂԲՈՒՄ

Ուժեղ հարվածից, կամ անսպասելի ընկնելուց կարող են ձիու վոսկորները ջարդվել:


Զարդվածքները լինում են կաշվի տակ և բաց: Կաշվի տակ յեղած զարդվածքի դեպքում վոսկորները չեն յերեվում, իսկ բաց ջարդվածքի դեպքում վոսկորների ծայրերը դուրս են ցցվում: Զարդվածք են զանազան տեսակի վոսկորները, և ամեն ջարդվածքի դեպքում միտք չունի բժշկել ձիուն: Հասակավոր ձիու թիակների, գավակի, ազդրի, կողերի, քթուկրի և վոտնակապի վոսկորի ջարդվածքները լավ են առողջանում: Քուռակներն ավելի լավ են առողջանում և նրանց մյուս վոսկորների ջարդվածքները նույնպես լավ են առողջանում: Ամենավատ ջարդվածքը համարվում է այն, յերբ վնասվել ե վորեւ մի հոգը (խաղը):

Ցեթե ճարդվածքը պատահել ե դաշտում, պետք ե ձիուն զգուշությամբ պառկեցնել ցածր սայլի վրա, տանել զոմը և շտապ կանչել անամսաբուժին կամ բուժակին: Նրանք խնամքով ուղղում են ջարդված վոսկորները, դնում են անշարժ կապ-

վածք և ձիուն կախում են: Պետք ե անողայման կախել ձիուն: Պառկած զրությամբ հասակավոր ձիու ջարդվածքը չի առողջանում:

ԻՆՉՊԵՍ ԿԱԽԵԼ ՁԻՈՒՆ

Ձիուն կախելու համար պետք ե իրար կարել յերկու ամուր պարկեր և այդ կտորի յերկու ծայրերին ամբացնել մի մի ամուր վայտ: Հիվանդ ձիուն պետք ե կանգնեցնել գերանի տակ, պար-



Կախում ձի

կերից կարած կտորը ատանել վորի տակ, փայտերի ծայրեր պարաններ կապել և նրանց միջոցով ձիուն թեթեվակի բարձրացնել դեպի առաստաղը, բայց այնպես, վոր վոտները գետնին դիպչեն:

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՂԱԿՈՒ ԴԵՂԲՈՒՄ

ՍՄԲԱԿՆԵՐԻ ՀՈԴԱՑԱՎԱՅԻՆ ԲՈՐԲՈՔՈՒՄԸ

Այդ հիվանդությունն առաջանում է նրանից, վոր տաքացած, քրանած ձիուն ջրում են կամ ծանր աշխատանքից հետո իսկույն կերակրում են գարով կամ վարսակով: Դրա համար սմբակների հաղացային բորբոքման դեպքում շատ տեղերում ասում են՝ ձիու վոտները «ջուր ե իջել» կամ ձիուն չափից ավելի հատիկ են տվել:

Սյդ հիվանդությունը միանգամից ե վրա հասնում: Զին հանկարծ սկսում ե դժվարությամբ տռաջ շարժվել: Առջեւի վոտքերը ցավելիս, նրանց շատ առաջ ե ձգում, խուսափում ե սմբակի առաջամասի վրա կանգնել, ավելի շատ կանգնում ե սմբակի կրնկամասի վրա, հետեւի վոտքերը փորի տակ ե տառում: Ցեթե հիվանդացել են բոլոր վոտների սմբակները, այն ժամանակ քայլում ե խճճվածի պես, փոքրիկ քայլեր ե անում և աշխատում ե ավելի շատ պառկեր: Սմբակները տաք են, նրանց սեղմելիս, առաջանում ե ուժեղ ցավ:

Հիվանդացած ձիուն պետք ե խսկույն պայտերից աղատել և հիվանդ սմբակներին զնել ձյուն կամ սառուց: Սմբառ կարելի յե կանգնեցնել ձիուն հոսող ջրի մեջ 2—3 ժամ կամ սըմբակները փաթաթել շորով ե հաճախ սառը ջուր ածել, կամ վերջապես քսել ջրալի կավ: Սմբակը սառեցնում են՝ մինչեւ վոր տաքությունը դադարի: Վոտքերը վերեվից մինչև սմբակները որական մի քանի անգամ ցրցնում են ջրախառն բեկինի յուղով (հավասար չափով) և տրորում են ծղոտով: Տալիս են 300—400 զրամ գլաուքերյան աղի լուծողական: Հիվանդ ձիուն տեղափորում են տաք շենքում, տակը լավ փուփածք են անում: Բացի խոտից ուրիշ կեր չպետք ե տալ: Հիվանդության առաջին որը բոլորովին հարկավոր չե ջուր տալ: Հետեւվյալ 3—4 որերը պետք ե որական տալ վոչ ավել, քան մի դուլ ջուր:

Սմբակների հողացագային բորբոքումից ձիերին պահպանելու համար անհրաժեշտ ե խիստ հետեւի խնամքի, կերակրելու և պահելու կանոններին: Ցերեք չպետք ե աշխատանքից հետո ձիերին խսկույն ջրել, խսկույն հատիկ տալ, այլ պետք ե չոր խոտ տալ: Ցերք ձիերն ընդհանրապես սովոր չեն հատիկի, պետք ե նրանց աստիճաննաբար սովորեցնել:

ՍՄԲԱԿԻ ԾԱԿՎԵԼԸ (յոկ կոյտա)

Ցերեքն ձիու սմբակը ծակվում ե մեխերից, յերկաթալարերից, փայտի, ապակու կտորներից: Զին հանկարծակի սկսումն է կաղար: Սմբակները բորբոքվում են՝ ուժեղ ցավ պատճառելով:

ԱՌԱՋԻՆ ՈԴՆՈՒԹՅՈՒՆՆ այն կլինի, վոր անմիջապես հեռացվի ծակող առարկան: Ծակված տեղը լավ նայում են, վորպեսզի նրա մեջ մնացած չլինեն ապակու, փայտի կտորներ կամ մեխեր: Սմբակից պետք ե խսկույն պայտը հանել, ներբանը (ոօծուած) մաքրել, հատկապես ծակվածքի շուրջը, վերքը լվանալ կրեոլինի, լիզոլի կամ կարբովիլայի լուծույթով (մի լիտր ջուռմ

յերկու դգալ), զրանից հետո սմբակը կապել մաքուր շորով և սառը պահել—ձյունով, սառուցով կամ սառը ջրով: Թարախակալելու դեպքում պետք ե խորը մաքրել սմբակը ծակվածքի տեղում և որական մի անգամ կրեոլինի կամ պղնձ-արջասպի վաննա դնել:

Վաննայի համար վերջնում են դույլը (լավ ե փայտյա), լցնում են տաք ջուր և ավելացնում են կրեոլին—մի լիտր ջրին յերկու դգալի հաշվով (3 տոկոսի), կամ կես դույլ ջրին 25 զրամ պղնձ-արջասպ (5 տոկոս): Կարելի յե վաննա անել նայել կաղնու կեղեվի լուծույթից: Վիրավորված վոտքը դնում են լուծույթով լիքը դույլի մեջ և պահում են 15—20 րոպե: Դրանից հետո վերքի վրա դնում են կուպրի կամ բեկինի յուղում թաթախված բամբակի կամ վշի կտոր և սմբակը լավ կապում են:

ՍԵԽԱՀԱՐՈՒՄ (զակօնա)

Ձիուն պայտելու ժամանակ, յեթե պայտառը վորեվի մի մեխ խփում ե սմբակի մսին մոտ, ստացվում ե մեխահարություն: Պայտելուց անմիջապես հետո ձին սկսում է կաղար, կանգնած ժամանակ վոտը բարձրացնում ե, սմբակը տաքանում ե. այդ նշաններն ասում են, վոր մեխահարում ե տեղի ունեցել:

Սմենից առաջ մեխահարված վոտից պայտը պետք ե հանել հետո նայել բոլոր մեխերի անցքերը, արդյոք կոտրած մեխեր չեն մնացել այնտեղ և մեխահարվերը լինել յոդ: Վերքը չկեղտուավելու համար սմբակը պետք ե կապել մաքուր շորով, իսկ վորպեսզի չըռըրբոքվի և ցավը մեղմանա—սմբակը պետք ե սառը պահել: Մի անցքից թարախ հայտնվելու դեպքում, այդ անցքը սմբակային դանակով լայնացնում են թարախնոսության համար և վոտքի վաննա յեն անում, ինչպես ներբանի ծակվածքից հետո թարախակայված վերքի ժամանակ:

ՎՈՏՆԱՀԱՐՔ (զածեչ անչինկա կոյտա)

Սմբակին անմիջապես միացած մաշքի վիրավորումը կոչվում է վոտնահարք:

Վոտնահարքը լինում է կարուկ շրջադարձի ժամանակ, սայթարելիս, անշնորք թարախի վակալինիս, վոտքերը սխալ զնելիս կամ նրանից, վոր մի քանի ձիեր վատ սովորություն ունեն—մի վոտք դնում են մյուսի վրա:

Փոքրիկ վոտնահարքի դեպքում պետք է խուզել վերքի շուրջն յեղած մազերը, վերքը լվանալ և ցանել նավթալինի ու կազնու կեղեվի խառն փոշի, շիբի հետ հավասար խառնած նավթալին կամ թե կազնու կեղեվի փոշու հետ խառնած բորակաթթու և ապա կապել:

Յեթե վոտնահարքից հետո առաջանա տաք ուռուցք, սկսում են սառեցնել, մինչև վոր ուռուցքն անցնի: Վոտնահարքից առաջած թարախակալած վերքը լավ մաքրում են և որական մի անգամ անում են կրեոլինի կամ լիզոլի վաննա, ինչպես ոմբակի ծակվածքի ժամանակ: Վաննայից հետո ցանում են փոշին և կապում:

Պետք է նկատել, թե վոտնահարգած ձիու վոր վոտքի, վրա և վոր կողմում վերք կա, վորպեսզի պայտը հնարավորին չափ հեռու մեխսի այդ վերքից: Դրա համար պայտը պետք է հարսարեցնել վերքին:

ՍՄԲԱԿԻ ՍԼԱՔԻ ԹԱՐԱԽԱԿԱԼՈՒՄԸ (հունիս սրբակ)

Սմբակի սլաքի թարախակալման պատճառներն են՝ գոմի խոնավ ու կեղտու հատակը, փուփացքի ուշ փոխելը, սմբակը չխնամելը, սխալ պայտելը, վորի ժամանակ յերբեմն սմբակի սլաքը շատ են կտրում:

Սմբակի սլաքը թարախակալելիս վատ հոտ և արձակում: Սովորաբար սկսում ե թարախակալել սմբակի սլաքի ակոսային մասը, բայց այդտեղից կարող ե անցնել և փափուկ մասը:

Յեթե իր ժամանակին ոգնություն ցույց չարվի ձիուն, վորի սմբակի սլաքը թարախակալված ե, զրանից սմբակը սեղմում ե կամ ծավում և մինչև անգամ քաղցկեղով (ռակ) հիվանդանում: Այդ պատճառով սմբակի սլաքի թարախակալումը հայտնաբերելիս պետք ե անմիջապես ոգնություն ցույց տալ ձիուն: Դրա համար սմբակային դանակով հեռացնում են սմբակի սլաքի բոլոր նեխած մասերը, ամեն որ լվանում են սմբակի ներբանն ու սմբակի սլաքը կրեոլինի կամ լիզոլի լուծույթով և սմբակի սլաքի վրա ցանում են պղնձարջասպի և կաղնու կեղեվափոշու խառնուրդ (մեկ մասը 10 մասի հետ): Լավ ե նույնպես սմբակի սլաքին կապել կուպրի կամ կրեոլինի մեջ թաթախափած բամբակի կամ վուշի կտրո:

Գոմում այդ հիվանդությունը չինչելու համար, պետք ե հաճախ մաքրել փուփածքը և թույլ չտալ կեղտոտություն ու

խոնավություն փարախներում, նույնպես և շարունակ հետեւկել սմբակների դրությանը:

Պետք ե հիշել, վոր վոչ մի բժշկություն չի ոգնի, յեթե ձիու տակը մաքուր և չոր փոփածք չինի, այլ կեղտոտություն, աղը ու խոնավություն ինի:

ՍՄԲԱԿԻ ՏԸՐՈՎԱԾՔ (համար կոչեա)

Վատ պայտելու գեպքում պայտի արանքներում քարել են մանում, նրանք ճնշում են սմբակի ներբանը և սմբակի տրորվածք առաջացնում: Բացի զբանից, տրորվածք լինում է, յերբ ձիերը գնում են սրածայր քարերով լի ճանապարհով:

Տրորվածքը կարելի յե հասկանալ ներբանի վրա յեղած կապակարմրավուն բծերից, Դրանք արնածեծ տեղերն են, վորոնք առաջացել են միեվնույն տեղի յերկար ճնշվելուց:

Տրորվածքի ժամանակ ձին ուժեղ կաղում և և չի կարող ամբողջ վոտքին դնել կապտակարմրավուն բծերի ճնշումն ուժեղ ցափ ե առաջացնում և ձին վոտք բարձրացնում ե:

Թարմ տրորվածքի գեպքում անհրաժեշտ ե ազատել ձիուն աշխատանքից, հանել պայտերը և սմբակի ներբանը սառը պահել:

Վոչ մի գեպքում չի կարելի թարմ տրորվածքը կտրել դա վոչ մի ոգուտ չի տա և հաճախ լուրջ հետեւվանքներ կունենա:

ԽՈՆԱՎԱԽԱՏ (մօքրես)

Խոնավախտ կոչվում ե վոտների հետեւի մակերեսի վրա դաշնություն փոսիկի մաշկի հիվանդագին բորբոքումը: Ամենից հաճախ խոնավախտը լինում է հետեւի վոտների վրա, վորը գոյանում ե բացառապես ձիու կեղտոտ պահելուց:

Հիվանդության սկզբում փոսիկի մաշկն ուռչում ե, տաքանում և հիվանդագին դառնում, հետո ճաքում և նրա մինչում կալիս կաշուն դեղնավուն հեղուկ:

Յեթե այդ հիվանդությունը զրեսվում է սկզբում, ապա հեշտ ե լինում բժիկել: Իսկ անինամ թողած խոնավախտը շատ դժվար ե բժշկվում, մեծ չափով տարածվում է մաշկի վրա և կարող ե բոլորովին հաջմանդամ դարձնել ձիուն:

Վորպեսպի ձիերը խոնավախտով չիվանդանան, հարկավոր ե գոմերը մաքուր պահել: Կեղտոտ տեղում աշխատելիս, պետք լվանալ վնջի տակ գոնզող վերքերը, հետո շորով չորացնել:

Խոհավախտը հայտնաբերելու դեպքում նրա շուրջը գտնված մազերը պետք է խուզել և հետեւ վոր հիմնդ տեղը չոր մաս: Հիվանդ տեղը պետք է քսել յոդի և գլիցերինի հավասար խառնուրդ որական մի անգամ, կամ թե կրեոլինի կամ լիզոլի յուղ (նրանց մի մասը խառնելով փորեվի ճարպի 10 մասի հետ): Յեթե վոչ մեկն ել չկա, ապա կարելի յե ցանել վերեվում հիշած փոշիներից մեկը (տես վուանահարքը):

Յեթե խոհավախտը շուտ չի բժշկվում, հարկավոր ե դիմել անասնաբուժաբան:

ԱՌԵՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՆԵԴՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Քիայած, վոր մյուս կենդանիների համեմատությամբ մատակ, ձիերը հազվագյուտ դեպքում են ունենում անկանոն ծնունդ՝ բայց և այնպես հարկավոր ե ծննդաբերությանը միշտ պատրաստ լինել, վորովհետեւ անկանոն ծնունդը յերբեմն մահով կա, բող ե վերջանալ վոչ միայն քուռակի, այլև մոր համար Պետք է հիշել, վոր մատակ ձին քուռակին կրում է 340 որ կամ 11 ամիս, պետք ե խմանալ, թե մատակ ձիերից ամեն մեկը յերբ և հիմանում, վորպեսզի իր ժամանակին պատրաստ լինել ծննդաբերությանը Պատրաստվել պետք ե անպայման, վորովհետեւ յերբեմն իմացող մարդու չնչին ոգնությունը կարող ե փրկել քուռակի և մինչեւ անգամ մատակի կյանքը, իսկ յուրաքանչյուր քուռակի յուրաքանչյուր մատակ թանկ ե սոցիալիստական գյուղաստեսության համար:

Ծննդաբերության մոտեցումը սովորաբար ցույց է տալիս ուռական ողակը, նրանից հոսող լորձունքը և մեծացած ուրծը:

Ծննդյան մոմենտին մատակ ձիու համար անհրաժեշտ ե պատրաստել չոր, մաքուր և ընդարձակ շենք թարմ փափածքով: Ծննդաբերությունից առաջ մատակը պետք է փոխադրել այդ շենքը:

Այդ շենքում պետք է լինի յերկու մետր յերկարությամբ ժապավեն կամ պարան, մաքուր վերնաշոր (խալաթ) և մի գույլ տաք ջուր, վորի մեջ հարկավոր ե ածել մի բաժակ կրեոլին կամ լիզոլ: Ողնություն ցույց տաղ մարդու ձեռքի յեղունդները պետք ե լավ կարիք լինեն, ձեռները մինչև ուսերը լիացված տաք ջրով ու սապոնով և յոզ կամ փափելին քսված:


Ծննդաբերության հաջող յելքը շատ դեպքերում կախված է նրանից, թե ինչպես են պատրաստվել նրան և ինչքան ձիշտ

ոգնություն են ցույց տվել ծանր ծննդաբերության ժամանակի: Բայց դա չի նշանակում, թե աւեն ծնող մատակի պետք է ոգնել: Յեթե ծննդաբերությունը նորմալ է անցնում, սովորաբար տեղում է 5—10 բոպելից մինչև մի ժամ, ապա այդ դեպքում վոչ մի ոգնություն հարկավոր չի ցույց տալ: Ողնում են միայն այն ժամանակ, յերբ պարզ յերեվում ե, վոր ծննդաբերությունը ձգձգվում է:

Անցնելով ոգնության, պետք ե իմանալ, թե ինչպես ե գալիս քուռակը—ձիշտ, թե սխալ:

ԱՐԳԱՆԴԱՄԵՆԸ ՈՒՂԻԼ ԴՐՈՒՅՑՈՒՆԸ

Ինչպես կովերի և այլ անասունների, այնպես ել մատակ ձիերի մոտ գոյություն ունի արգանդապաղի յերկու նորմալ դրություն, առջեկ կամ դիմային դրություն և հետեւ կամ կոնքային դրություն:




Ծննդաբերության ժամանակ քուռակի գլխային նորմալ դրություն

Առջեկ նորմալ դրության դեպքում արգանդապաղը դաւրս է գալիս առջեկ կողմ թիկունքը զեպի վեր, առաջի յերկու վոտները ձգված, վորոնց վրա տեղափորվում ե զլուխը: Սյս դրությունը կարելի յե հասկանալ ծննդյան անցքից յերեացող սրմակներից, վորոնք ներբանավ ներքեւ են ուղղված:

Կոնքային նորմալ դրության դեպքում արգանդապաղը դուրս է գալիս հետեւ կողմով, թիկունքը դեպի վեր, հետեւ

յերկու վոաները ձգված դեպի յելքը և կողք-կողքի: Այս դեպքում դուրս ցցված սմբակները ներբանով դեպի վերն են ուղղված:



Ծննդաբերության ժամանակ քուռակի կոնքային նորմալ դրամիունը

Նորմալ դրությունը պետք է լավ ճանաչել նրա համար, վարպեսզի վորոշեն, թե արդյոք ճիշտ է դուրս գալիս արգանդապըտուղը: Արգանդապտղի նորմալ դրության դեպքում, մատակ ձիերը շատ քիչ դժվար ծննդաբերություններ են ունենում:


ԱՐԴԱՆԴԱՊՏՂԻ ՍԽԱԼ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծննդաբերության դեպքում ոգնությունը սովորաբար պահանջվում է արգանդապտղի սխալ դիրք ունենալու ժամանակ: Վորպեսզի պարզվի, թե ինչպիսի ոգնություն պետք է ցույց տալ ծնող մատակին, դրա համար, ամենից առաջ անհրաժեշտ է վորոշել թե ինչպիսի ընթանում արգանդապտուղը, թե արդյոք յերկու գոտներն ել միասին և կողը-կողքի յեն պառկած, արդյոք զլուխը մի կողմի վրա կամ դեպի կուրծքը չի թերքած և այլն: Վորպեսզի նարափոր լինի վորոշել, թե ինչպիսի ընթանում արգանդապտուղը, դրա համար հարկափոր է զիմել անամնաբուժական մասնագետին, վորը պետք է ոգնություն ցույց տա ծննդականին այն բոլոր դեպքերում, յերբ արգանդապտղի դիրքը սխալ է լինում: Իսկ յեթե ծնելու ժամանակ մոտակայքում անամնաբուժական մասնագետ չհարվի, և յեթե

այդ ժամանակ մարդու միջամտությունը անհրաժեշտություն է, ապա ծննդականին ոգնություն կարող են ցույց տալ ամ բըիդադիրը կամ ձիապանը (ինչպես նաև անամնաբուժական լիազորը կամ անամնաբուժական սահմանարը), վորոնք այս դում համապատասխան վորձառություն ունեն:

Պատահում է, վոր արգանդապտղի զլուխը կողքի վրա յեղանգում կամ դեպի կուրծքն է թերքած: Այս դեպքերում ծննդյան անցքից յերեսում են միայն սմբակները, իսկ ինքը՝ քուռակը չի կարող դուրս գալ:

Վորպեսզի նարափոր լինի վորոշել, թե ինչ վրության մեջ և գտնվում զլուխը կամ ամբողջ արգանդապտուղը, վրա համար




Առաջի վոաների ծոծրակային դրամիունը

հարկափոր և կրեոլինի (ախտահանիչ միջոց) լուծույթով (մի լիոր ջրին 20 գրամ) լվանալ ծննդյան անցքի արտաքին մասերը, մտցնել ծննդյան անցքի մեջ մաքուր լվացած և վագելինով յուղած ձեռքք՝ մատներ ն իրար կպցնելով, գդուշությամբ շոշափել զլխի դրությունը և սխալ լինելու դեպքում շտկել այն: Դրա համար հարկափոր և սպասել մինչև վոր դադարի ժամանակավորապես յերկունքը, վորից հետո թեթեկակի հետ մղել պտուղը դեպի արգանդի ներսը և ապա զլուխն իր տեղը դարձնել, այսինքն՝ նրան զնել առջեկ ձգված վոտների վրա: Յեթե ինչ-ինչ պատճառներով չի հաջողվում ձեռքով դարձնել զլուխը, ապա արգանդապտղի ներքեի ծնոտի վրա գցում են հանգուց և վորեն մեկին տալիս են քաշելու թելի ծայրից: Նրանից

հետո, յերբ արգանդապատուղը ճիշտ զիրք և ընդունում, հարկավոր և ոգնել նրան դուրս գալու: Յերկունքի ժամանակ, աստիճանաբար, զգուշությամբ քաշում են դուրս ցցված վառներից, զրա համար վոտների վրա, կապատեղի շուրջը, կարելի յեկապել ժամանակն կամ ամուր և յերկար յերեսորբիչ:

Եատ դժվար ե ուղղել զիսի զիրքը, յեթե նա վոչ թե կողքի յե շրջված, այլ զեպի կործքը: Այսպիսի զրությունը փորոշելուց հետո պետք կլինի խոկույն զիմել անասնաբուժին կամ ոգնականին: Պետք ե լավ հիշել, վոր յերբեք չի կարելի ուժով քաշել արգանդապատուղը, յեթե նա ուղիղ զուրս չի զա-



Առաջի ձախ գոտը ծալված և փորի տակ

իս և վոչ մի դեպքում չի կարելի արգանդապատուղը դուրս քաշել յերկունքի բացակայության ժամանակ: Այսպիսի դեպքում ուժի գործադրությունը վոչ միայն անոգուտ ե, այլ նաև կարող ե առաջ բերել թե քուռակի և թե մոր մահը:

Յերբեմն քուռակը զիսով ե գոտը գալիս, բայց վոտները չեն յերեգում: Սա առաջանում է նրանից, վոր վոտները ծալված են լինում փորի տակ կամ ծոծրակի վրա յեն պառելած: Կարող ե պատահել, վոր մի վոտը ծալված և խիլ մյուսը՝ ծննդաբերական անցքից կախված: Այս դեպքում ևս պետք ե ճիշտ զիրք տալ վոտներին և յերբեք ուժով չրքաշել արգանդապատուղը: Յեթե մի վոտը ծալվել ե, դուրս ցցված վոտքից թել են կապում, վորպետի նա յետ չգնա, թեթեակի հետ են մղում արգանդապատուղը զեպի արգանդը և փաթաթված վոտքին տալիս են ուղիղ դիրքավորում: Յեթե

յերկու վոտներն ել ծալված են, ապա նախ շտկում են մեկի զրությունը, նրա վրա հանգույց են դնում, արգանդապատուղը հրում են զեպի արգանդը և շտկում են մյուս վոտքի զրությունը:

Յեթե վոտները ծոծրակի վրա յեն պառկած, ապա մեկ-մեկ շուռ տալով նրանց՝ յերկարացնում և նրանց վրա դնում են զրությը:

Բացի վիրոհիցյալ սխալ զիրքերից, արգանդապատուղը կարող ե ընթանալ արամակի (ոռուրեք) կամ թիկունքով գեպի ներքի: Այս զեպքում դժվար ե նրան նորմալ զիրք տալ և պետք ե լինում զիմելու անասնաբուժին կամ ոգնականին: Յեթե բժշկին կամ ոգնականին նույնպես չի հաջողվում արգանդապատղին ճիշտ զիրք տալ, ապա ծննդականի կյանքը փրկելու համար, նրանք մաս-մաս դուրս են քաշում արգանդապատուղը:

Արգանդապատղի գոտը գալուց հետո, անհրաժեշտ ե պատուել նրա շուրջը յեղած թաղանթը և համել նրան քուռակի վրայից: Կորել պորտապարանը հանգույց անելով քուռակի փորի մոտ՝ յոդով քսված կամ կրեոլինի լուծուլթի մեջ թրջված պինդ թելով: Իսկ ամբողջ պորտապարանի վրա պետք ե բսել յոդ, կրեոլինի լուծույթ կամ կուպրի Այս բանն անպայման պետք ե անել, վորովհետև պորտապարանը վերոհիշյալ լուծույթներով բսելը զգալիորեն պահպանում ե քուռակին և թույլ չի տալիս, վոր նա հիվանդանա քուռակներին հատուկ, այսպես կոչված՝ հոդացավ հիվանդությամբ:

Ծնելուց հետո, կրեոլինի տաք լուծույթով լվանում են ծննդկանի այն տեղերը, վորոնք գտնվում են ծննդաբերական ձանապարհի շուրջը՝ արանքը, պոչը և յետեկի վոտները: Թաց հարզը և ընկերքը խոկույն պետք ե հեռացնել և մատակի տակ փոել չոր և մաքուր հարզ:

Վորպեսպի խուսափել վաղաժամ և դժվար ծննդաբերություններից, զրա համար հարկավոր ե հզի մատակներին ծրանելուց յերկու ամիս առաջ ազատել ծանր աշխատանքից, մյուս ձիերից առանձնացնել և թույլ տալ աշխատելու վոչ շուտ, քան ծնելուց մի ամիս հետո:

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մինչև այժմ մեր ուսումնասիրած հիվանդությունները պատկանում ենին այնպիսի հիվանդությունների թվին, վորոնցով թեև միաժամանակ կարող են հիվանդանալ մի քանի ճիեր, յեթե որինակի համար, թունավորված կերը միանդամբց վա-

սել ե շատ ձիերին, կամ շատ ձիեր ծանր աշխատանքից քըրտ-նած ջուր են խմել, բայց և այնպես այդ հիվանդություն-ները մի ձիուց մյուսին չեն փոխանցվում: Մրանք վարակիչ հիվանդություններ չեն:

Իսկ այն հիվանդությունները, վարոնք մի ձիուց փոխանց-վում են մյուսին, կոչվում են վարակիչ:

Վարակիչ հիվանդությունները շատ վտանգավոր են, նրանք ձիերի մեջ աճագին կոտրած են առաջ բերում, դժվարությամբ են բժշկվում և նրանցից վոմանք փոխանցվում են մարդուն, առաջ բերելով շատ ծանր (սիբիրյան ախտ) և նույնիսկ ան-բուժելի հիվանդություններ (խլախտ—carr.):

Սպասարկող անձնակազմը ձիապանը, բրիգադիրը, անաս-նաբուժը չպետք ե անպայման առաջին ոգնություն ցույց տան ձիերի բոլոր վարակիչ հիվանդությունների դեպքում: Անհա-ժեշտ ե ծանոթանալ վարակիչ հիվանդությունների նշան-ների հետ, վորպեսզի իմացվի, արդյոք յերեան յեկած հիվան-դությունը վարակիչ ե, թե վոչ:

Վարակիչ հիվանդության հայտնաբերվելու գեպքում, վոչ թե անհաժեշտ ե ոգնության առաջին միջոցներ ձեռք առնել հիվանդ ձիուն բուժելու համար, այլ հարկավոր ե ձեռք առնել մյուս, դեռ առողջ ձիերին հիվանդանալուց զերծ պանելու միջոցներ: Վարակիչ հիվանդության հայտնաբերվելու մասին խկույն պետք ե հայտնել անասմարութին կամ բուժակին, իսկ յեթե այդպիսիները չկան, ապա հայտնել գյուղիոր-հրդին կամ կոլանտեսության վարչությանը:

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Վարակիչ հիվանդություններն առաջանում են նրանից, վոր ձիու որգանիզմի մեջ ընկնում են, այսպես կոչված, միկ-րոբիներ:

Միկրոբները չափազանց մանր, հասարակ աչքի համար անտեսանելի կենցանի ետակներ են: Նրանք այնքան փոքր են, վոր մի կաթիլ ջրում կարող են լինել մի քանի միլիոններով, և նրանց կարելի յե տեսնել միայն մեծացնող ապակիներ ունեցող հատուկ գործիքով, վորը կոչվում ե մանրադիտակ (միկ-րոսկոպ):

Միկրոբները տարբեր ձև են ունենում: Մանրադիտակով հայելիս յերեւում ե, վոր վոմանք նման են կարճ ձողիկների, վոմանք փոքր գնդիկների, իսկ վոմանք ել վոլորապտույտ թե-

լերի: Նրանք բնության մեջ տարածված են ամենուրեք՝ հո-ղում, ջրում, ողում: Սակայն բոլոր միկրոբներն ել վա-րակիչ հիվանդություններ չեն առաջացնում: Մի քանի միկրոբներ նույնիսկ ողուտ են տալիս: Որինակի համար, այնպիսի հրա-շալի կեր, վորպիսին սիրուն ե, հասունանում ե նրա մեջ շալի կեր, վորպիսին սիրուն ե, հասունանում ե նրա մեջ գտնվող հատուկ, այսպես կոչված՝ կաթնա-թթվային միկրոբների ներգործության և բազմացման շնորհիվ:

Վարակիչ հիվանդություններն առաջանում են յուրաքան-չյուր հիվանդության համար առանձնահատուկ միկրոբներով: Միկրոբներից վոմանք առաջացնում են ձիերի խլախտ (can) հի-վանդությունն, մյուսները՝ սիբիրյան ախտ, յերրորդները՝ գեղ-ձուռուցք (myle) և այլն:

Պետք ե հիշել վոր ձիու վարակիչ հիվանդություն-ները զարգանում են միայն այն ժամանակ, յերբ նրա որգա-նիզմի մեջ մտնում են վարակիչ միկրոբներ: Այս միկրոբները խիստ բազմանալով ձիու որգանիզմում, առաջ են բերում հի-վանդություններ:

ԻՆՉՊԵՍ Ե ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ՎԱՐԱԿՈՒՄԸ: Վարակիչ հի-վանդություններով վարակվելու սովորաբար առաջ ե գալիս հիվանդ և առողջ ձիերի շփումից: Ընդհանուր ջրելա-աեղեր, կերատացտեր, լծասարք, քերիչներ ոգտագործելու գեպքում: Վարակված արոտավայրերում արածելիս, միջատների խայթելու միջոցով (ճանձեր, հասարակ սպիներ, շնաձանձ), հիվանդ մատակի կամ քուռակի զուգավորման և մի շարք այլ գեպքերում, միկրոբները թափանցում են ձիերի որգանիզմը և առաջացնում են համապատասխան հիվանդություններ—խը-լախտ, սիբիրյան ախտ և այլն:

Միկրոբները մտնում են ձիու որգանիզմը կերի և ջրի հետ միասին բերնի, քթի, աչքի միջով, կաշվի միջով՝ յեթե նրան վրա փոսեր կամ ճանկուած տեղեր լինեն և սեռական անցքերի միջո-ցով, զուգավորման ժամանակ:

Սակայն ձին ամեն ժամանակ չի հիվանդանում, յերբ նրա որգանիզմի մեջ մտնեն միկրոբները: Որգանիզմը պայքարում է վարակի դեմ և միկրոբների զարգացման համար անհաժեշտ առ օրգանիզմի տյապիսի մի վիճակ, վոր նա չկարողանա կովել կամ նրա կովելու ընդունակությունը զգալի չափով պակասած լինի: Այսպիսի վիճակը լինում ե նիհար ձիերի մոտ, այնպիսի ձիերի մոտ, վորոնք վատ են խնամքում, վորոնք կեղտու-թյան մեջ են պահպում և իրենց ուժից վեր ծանր աշխատանք են կատարում: Թույլ, նիհար, վարիտ ձին ավելի շուտ ե հի-

վանդանում, քան այն ձին, վորը ճիշտ ե խնամվում, ճիշտ ե ոգտագործվում աշխատանքում և ունի առողջ կազմվածք: Այս բանը պետք ե լավ հիշել:

Որգանիզմի մեջ միկրոբի մտնելուց հետո, հիվանդությունը մի անգամից յերեան չի գալիս, վորոշ ժամանակ ե պահանջվում, վորպեսզի միկրոբները բազմանան: Կենդանու որդանիզմի մեջ միկրոբի մտնելու և հիվանդության առաջին նըշանների յերեան դալու միջև յեղած ժամանակամիջոցը կոչվում է հիվանդության թագուն շրջան: Բժիշկները նրան անվանում են ինկուբացիոն շրջան: Թագուն շրջանը լինում ե բոլոր վարարիչ հիվանդությունների ժամանակ: Միջին հաշվով նա տեղում ե 2-ից մինչև 14 որ: Հիվանդության թագուն շրջանում ձին շատ անդամ արտաքուստ բոլորովին առողջ ե յերեւմ:

ԻՆՉՊԵՍ են ԿԾՐՎՈՒՄ ՄԻԿՐՈԲՆԵՐԸ ԶԻՈՒ ՈՐԳԱՆԻՉԾՄԻՑ: Վարակված ձին համաճարակն իր շուրջը տարածելու աղբյուր ե հանդիսանում: Վարակը կարող ե գտնվել հիվանդ ձիու բոլոր արտաթորումների մեջ՝ թքի, քթի արտաթորումների, թարախի, թրիքի և մեզի մեջ: Այս արտաթորումներով վարակիչ հիվանդություն ունեցող ձին վարակում ե իր շուրջը յեղած հարգե փոփածքը, կերը, հողը, լծասարքը այն դույլը կամ հորը, վորոնցից նա չուր ե խմում, սպասարկող ձիապանի հագուստը և այլ շրջապատող առարկաները: Միկրոբները, կաչելով այս առարկաներին, կարող են յերկար ժամանակ պահպանվել, շփումով կամ այլ միջոցներով փոխանցվել առողջ ձիերին և վարակել վերջիններիս: Այսպես են տարածվում և հիվանդ ձիերից առողջներին փոխադրվում վարակիչ հիվանդությունները:

ՎՃԱՆԳԱՎՈՐ են ԱՐԴՅՈՒՔ ԶԻԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՐԻՇ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ: Ձիերի շատ վարակիչ հիվանդությունները վտանգավոր են նաև մյուս կենդանիների համար, կան հիվանդություններ, վորոնք կարող են ձիերից անցնել խոշոր յեղջուրավոր անասուններին, մանր յեղջույրավոր անասուններին և խոզերին, որինակ, սիրիբյան ախտը, կատաղությունը: Այս հիվանդություններով կարող ե հիվանդանալ նաև մարդը: Խսկ մի քանի հիվանդություններ լինում են միայն ձիերի մոտ և չեն փոխանցվում մյուս կենդանիներին, որինակ, գեղձուռուցքը: Խլախտով (carr) յեղջուրավոր անասունները չեն հիվանդանում, բայց նրանով մարդը կարող ե հիվանդանալ:

ԻՆՉՊԵՍ ՊԱՅՔԱՐԵԼ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ: Վարակիչ հիվանդությունների զեմ պայքարելու համար, ամենից առաջ ամեն մի գյուղխորհուրդ դրա համար պետք ե ունենալ լավ շինած անասունների գերեզմանոց, հատկացնելով դրա համար չոր և անջուր հողամաս: Անասունների գերեզմանոցը շրջապատված պետք ե լինի լայն խրամով կամ դարպաններ ունեցող ամուր ցանկապատով, վորպեսզի անասունները չկարողանան ներս մտնել:

Վորոնե հիվանդությունից սատկած բոլոր կենդանիների գիակները պետք ե տարգեն գերազմանոցը: Ճարպ յեփելու կամ այլ նպատակներով գիակը կարելի յե ոգտագործել միայն անասնաբուժի կամ բուժակի թույլտվությամբ: Ամեն վոր պետք ե իմանա, վոր գիակը վարակման աղբյուր ե: Դրա համար բավական չե միայն գիակը փոխադրել գերազմանոցը և ցցել նրան այնտեղ: Նրան անպայման պետք ե թաղել փոսում 2 մետրից վոչ պակաս խորությամբ:

Անասնաբուժական լիիազորը, բոլոր կոլտնտեսականները և մենատնտեսները խստիվ պետք ե հետեւն անասունների գերեզմանոցի կանոնավոր սարքված լինելուն և ցանկապատի կամ դարպասի քանդված լինելու դեպքում, իսկույն կարգի բերել այն: Նրանք պարտավոր են նույնպես հետեւյելու, վոր բոլոր գիակներն անպայման փոխադրվեն գերեզմանոց: Վարակված կենդանիների գիակները փոխադրելու համար հարկա փոր ե ունենալ հատուկ սայլ: Վարակիչ հիվանդությամբ բռնը ված և հիվանդանալու մեջ կասկածվող անասուններին պահելու համար, յուրաքանչյուր կողանտեսություն պետք ե ունենա հատուկ շենք—մեկուսիչ (ազօլյատօր):

Բոլոր նոր ձեռք բերված ձիերն ու անասունները պետք ե քննության առնվեն անասնաբուժական մասնագետների կողմից և կարանտինում պահպես 3—4 շաբաթ: Վերեկում ասվեց, վոր վարակիչ հիվանդությունների գեպքում լինում ե հիվանդության թագուն շրջան: Կարանտինի մեջ են պահում ձիերին նրա համար, վորպեսզի պարզվի, թե արդյոք նրանք չունեն վորեե հիվանդություն թագուն վիճակով: Կարանտինի ժամանակ (20—30 որ) հիվանդությունը քողարկված զրությունից անցնում ե բաց զրության: Կարանտինի ամբողջ տևողության ընթացքում ձիերն ու անասունները պետք ե լավ խնամվեն, կերակրվեն և ջրվեն:

Զիով ուրիշ գյուղեր գնալու դեպքում պետք ե խուսափել ձիերին ընդհանուր ձիակապարանին կապելուց, տեղավորել նը-

քանց առանձին ախոռներում և թույլ չտալ, վորպեսզի նրանք ջրվեն ընդհանուր ջրելատեղերից, մասնավանդ վարակիչ հիփանդությունների տեսակետից կասկածելի տեղերում:

Վարակիչ հիփանդությունների յերևան գալու դեպում, անհրաժեշտ ե իսկույն այդ մասին հաղորդել անասնաբուժին կամ բուժակին, իսկ յեթե նրանք չլինեն, ապա գյուղխորհուրդին և կոլտնտեսության վարչությանը Առանց բժշկին կամ բուժակին սպասելու, պետք ե առողջ ձիերից առանձնացնել և մեկուսիչում տեղավորել ամեն մի հիփանդ կամ կասկածելի ձիուն:

Այս իշխանները, ձիախոռի բաժամունքները և ձիախոռները, վորտեղ տեղավորված են յեղել հիփանդ ձիերը, անպայման պետք ե ախտահանել և հականեխել: Աղը և հարդի փոփածքը պետք ե թաղել հողում կամ ավելի լավ ե այլեւ էծասարքը՝ անուրը (Խօմոյո), լծասարքի փոկը, սանձը և այն հարկավոր ե կուպրով մի լավ քսել: Զիախոռները հականեխում են կրեոլինի, կարբոլիայի, լիզոլի լուծույթով (մի դույլ ջրին Յ-ական բաժակ), կրի կաթով (10 մաս նոր մարած կրի 40 մաս ջրի հետ խառնած) կամ տաք մոխրաջրով: Այս լուծույթները ջրամուղ գործիքով գողողում կամ սրսկում են պատերը, հատակները և այն բոլոր իրերը, վորոնք ձիախոռում են գտնվում:

ԽԼԱԽԾ (Հառ)

Զիերի համար ամենավարակիչ և վտանգավոր հիփանդություններից մեկը խլախտն եւ նա վտանգավոր ե վոչ միայն սրա համար, վոր նրանով հիփանդանում են ձիերը, եշերը, ջորիները, այլ և նրա համար, վոր հիփանդ ձիուց խլախտով կարող ե վարակվել նաև մարդը: Խլախտը համարյա անեռուժելի հիփանդություն ե, վորը մահով ե վերջանում: Յեղջյուրափոր անասունները, խոզերը և թուչունները խլախտով չեն հիփանդանում:

Խլախտն առանձնապես լայն չափով տարածված եր Ազգվաճական և Հյուսիսային Կովկասի յերկրամասերում: Հինգ տարվա ընթացքում (1925—30) կուլակային վնասարարության հետեւանքով, այս յերկու յերկրամասերի տերիտորիայում խլախտով վարակվել ե ավելի քան 20 հազար ձի՝ պետության կողմից առաջարկված միջոցառումներն իսկույն չըգործադրելու պատճառով: Պարզ ե, վոր սրանով ահազին վընաս և հասցվել մեր գյուղատնտեսությանը:

Խլախտով հիփանդացումն առաջ ե գալիս հատուկ խլախտային միկրոբների՝ որգանիզմի մեջ մտնելուց: Հիփանդ ձիու

արտաթորումների՝ քթի արտահոսության, վերքի թարախի հետ միասին տարածվում ե խլախտային միկրոբներ: Նրանք ընկնում են կերի, կերատաշտի, լծասարքի և ուրիշ շրջապատող առարկաների մեջ և այդ առարկաներից զանազան միջոցներով թափանցում են առողջ ձիերի որգանիզմի մեջ և խլախտով վարակումներնց: Նշանակում ե ուրեմն, վոր խլախտով ձին հանդիսանում ե խլախտի մշտական տարածողը:

Ամենից ավելի հաճախ վարակումն առաջանում ե կերից, ընդհանուր ջրելատեղի, ընդհանուր ձիասարքի միջոցով: Յերբ առողջ ձիերը շիվում են հիփանդների հետ, այս դեպքում խլախտի միկրոբները հիփանդ ձիուց ընկնում են առողջ ձիուքերի ունեցող կաշվի վրա, քթի կամ աչքերի մեջ: Փորնկտալով և հազարով, հիփանդ ձին վարակիչ հիփանդությունը տարածում ե ողում, առողջ ձիերը շնչելով այդ ոդը, նույնպես վարակվում են:

Զիերի վարակվելուց հետո, խլախտը մի անգամից կարող ե չհայտաբերվել, այլ ընթանալ թագուն կերպով: Հիփանդության այս թագուն ձեր յերեմն կարող ե տարիներով տեել: Արտաքուստ այսպիսի ձին բարորովին առողջ ե յերեվում, բայց արգեն վարակում ե մյուս ձիերին և տարածում հիփանդությունը:

Միայն անասնաբուժը կարող ե իմանալ ձիու խլախտով թագուն կերպով հիփանդանալը: Սրա համար ձիու աչքը լրցնում են հատուկ հեղուկ—մալեյին: Մալեյին լցնելուց 6 ժամ, հազվագյուտ գեպքում 24 ժամ հետո խլախտափոր ձիերի աչքերից թարախ է հոսում, կոպերը կարմրում և ուռչում են, իսկ առողջ ձիերի աչքերը բոլորովին մաքուր են մնում: Բացի այս յեղանակից, վորը կոչվում ե մալեյինիզացիա, բեկները թագուն խլախտը վորոշում են արյան հետագոտությամբ:

ԽԼԱԽԾԻ ՆՇԱՆՆԵՐԸ: Զանազանվում են՝ քթի, թոքային և կաշվային խլախտը: Քթի խլախտի գեպքում քթից (սովորաբար մի քթածակից) առաջանում ե արտահոսում: Ակզբում այդ արտահոսումը լորձունքու և լինում, իսկ հետո թարախանման և դառնում, յերբեմն ել արյունոտ: Քթի մազասային թաղանթի վրա յերեան են գալիս փոքր կոշտեր, վորոնք վերքերի յեն վերածվում: Այս վերքերից վուանց այրում են և նրանց տեղում գոյանում են աստղաձև սպիներ: Ծնունդների տակ հայտնաբերվում ե կարծր, ցավ չունեցող, բլրանման և անշարժուուցոցը:

Թոքային խլախտի գեպքում վոչ մի առանձին նշաններ չեն լինում, այդ պատճառով ել շատ դժվար ե իմանալ: Զին նի-

հարում, թուլանում ե, սկսում ե հաղար, յերբեմն քթից հո-
առնելի են առաջանում:

Կաշվի խլախտի դեպքում ձիու կաշվի վրա յերևան են գա-
լիս պինդ, ցավացող ուռեցքներ, սիսեռից մինչև անտառա-
կաղնու մեծությամբ: Այսունեաւ այդ ուռուցքները դառնում են
ցավ չունեցող ուռուցքներ և վերածվում են խոր վերքերի: Վեր-
քերը կաշվի վրա դասավորվում են շղթայի նման — մեկը մյուսի
հետեից:

Խլախտն ամենից հաճախ յերկար տևելով, դառնում
է ձիու խրոնիկական հիվանդություն, բայց կարող ե լինել
այսպես կոչված՝ խլախտի կարճատե ձե:

ԻՆՉՊԵՍ ՊԱՅՔԱՐԵԼ ԽԼԱԽՏԻ ԴԵՄ: Բացի այն ընդհանուր
միջոցներից, վորոնց մասին վերևում խոսեցինք, խլախտի վա-
րակումը կանխելու համար, անասնաբուժը պետք ե քննի կոլ-
տնտեսության կողմից նոր ստացված ձիերին: Քննելու ժամա-
նակ ձիերը մալլեյինով ստուգվում են, այնուհետև մի ամսից
վոչ պակաս ժամանակով պահպում են կարանտինայի մեջ և
միայն դրանից հետո յե, վոր տարվում են բրիգադային ձիա-
խոռերը:

Այն ձին, վորի մոտ յերեան են հանված խլախտի նշաններ,
խսկոյն, առանց սպասելու բժշկին կամ բուժակին, պետք ե
մեկուսացվի:

Խլախտավոր ձին վարակի ազբյուր ե հանդիսանում, վորից
վոչնչանում են թե ձիերը և թե մարդիկ:

Այդ իսկ պատճառով, բոլոր հայտնի խլախտավոր ձիերն
խսկոյն վոչնչացվում են: Սպանված խլախտավոր ձիերի, ինչ-
պես նաև խլախտից սատկած ձիերի կաշին քերթելը չի թույ-
լատրվում, իսկ այն ձիերը, վորոնց աչքերից թարախ ե հոսում
մալլեյինիկացիայի յենթարկվելուց, բայց խլախտի վոչ մի ուրիշ
նշան չունեն, այդպիսիների վզի աջ կողմի վրա «Մ» նշան են
խփում և ուղարկում են հատուկ կողմնականություն, վորտեղ
հափաքվում են բացառապես մալլեյինիկացիայի յենթարկված
ձիերը և խիստ մեկուսացման մեջ են պահպում բժշկի մշտա-
կան հսկողության ներքո:

ՄԵՆԻՆԳԻԾ (ՈԵՂԵՂԱՊԱՏՅԱՆԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ)


1931 թվականին նախկին Հյուսիսային Կովկասի յերկրա-
մասի մի քանի շրջաններում և Ռուսական խիստ տարածվեց,
այսպես կոչված, մենինգիտը, կամ ձիերի ուղեղային հիվանդու-

թյունը: Միայն մի տարվա (1931) ընթացքում այս հիվան-
դությունից սատկեցին մի քանի հազար ձիեր:

Մենինգիտը վարակիչ հիվանդություն ե: Բայց թե ինչ միկ-
րոֆիներից ե առաջանումնա և վարակն ինչպես ե մտնում ձիերի
որդանիզմը, գիտնականները դեռ վերջնականապես չեն պարզել:

Պետք ե յենթարկել, վոր վարակումը տեղի յե ունենում
այսպես, ինչպես ուրիշ վարակիչ հիվանդությունների ժամա-
նակ, այսինքն՝ յեթե առողջ ձիերը շփվեն մենինգիտով հիվանդ
ձիերի հետ, այն կերի միջոցով, վորտեղ հիվանդ ձիուց ընկել
ե վարակիչ միկրոբը, ընդհանուր ջրելատեղի միջոցով, մենին-
գիտից սատկածների
չհափաքված դիակ-
ների, ընդհանուր
րծասարքի միջոցով
և այլն:

Մենինգիտի դեպ-
քում վարակիչ նյու-
թերը մտնելով որ-
գանիզմի մեջ, ամե-
նից ավելի մնասում
են լիարդին և մա-
նավանդ ուղեղին:



Մենինգիտով հիվանդացած ձի գրգռված վիճա

ինչպես բոլոր վա-
րակիչ հիվանդությունների, այսպես ել մենինգիտ լինելու դեպ-
քում, հիվանդությունը որգանիզմի մեջ վարակի թափանցումից
անմիջապես հետո յերեան չի դալիս, այլ ունի հիվանդության
թագուն շրջան, վորը, ըստ մի քանի բժշկէլների դիտողություն-
ների, տևում ե 3-ից մինչև 40 որ:

ՄԵՆԻՆԳԻԾԻ ՆՇԱՆՆԵՐԸ: Ձիերի մոտ մենինգիտը յեր-
կու ձևով ե լինում — հանդարտ յեվ մօլեգին: Հանդարտ ձեր կա-
րող ե փոխվել մոլեզին ձեր և ընդհակառակը — մոլեզինը՝ հան-
դարտի: Մենինգիտի յերկու ձևերն ել սկսում են նրանից, վոր
աչքերի լորձունքաթաղանթները դեղնում են: Հանդարտ ձեր
ժամանակ ձին քնատ ե դառնում և գլուխը ցած գցած կանգ-
նում ե մի անկյունում՝ պատին կոթնած. վոչ ուտում ե, վոչ
խմում և վոչ ել թրբում, իսկ յերբեմն բռնվում ե նաև
մեզը: Մոլեզին ձեր ժամանակ, քնատ վիճակը փոխարինվում ե
խիստ զրգուումով: Ձին բոլորովին անգիտակցաբար առաջ ե
շարժվում, դիաղում ե ճանապարհին յեղած առարկաներին, կոտ-
րում ե գլուխը, առանձնապես ճակատը և աչքերի ներքերի մա-

սերը, յերբեմն նույնիսկ կոտրում ե քթի վոսկորները, ջարդում ատամները։ Յեթե ձին գտնվում ե ձիախոռում, ապա սկսում ե պատերի վրա բարձրանալ։ Մի քանի ձիեր սաստիկ քրտնում են։ Դաշտում հիվանդացած ձին, անգիտակցաբար թափառելով, կարող ե գլորվել անդունդի, ջրհորի կամ փոսի մեջ։ Մենինգիտի յերկու ձիերի դեպքումն ել մարմնի ջերմությունը նորմալից ցածր ե լինում (36—36,5)։

Մենինգիտը մեծ մասամբ տևում է մի որից վոչ ավելի, իսկ հազվագյուտ դեպքերում՝ 2—3 որ։ Մենինգիտով վարակված 100 ձիուց 50—90-ը սատկում են։ Իսկ այնտեղ, վորտեղ հիվանդներին վոչ մի ոգնություն ցույց չի տրվում, սատկում են բոլոր հիվանդացածները։

ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆ։ Հիվանդ ձիուն պետք ե մեկուսացնել և բոլոր միջոցները ձեռք առնել, վորպեսզի նա իրեն վերքեր և ջարդվածքներ չհասցնի։ Հատակի վրա ավելի շատ հարդ փոել, իսկ պատերի ուղղությամբ դարսել ծղոտի պինդ կապված խուրձեր։ Սրանից հետո հարկավոր ե ձեռքով մաքրել ուղիղ աղիքը արտաթորանքից և հոգնա դնել։ Տաք յեղանակին հիվանդ ձիուն պետք ե որեկան մի քանի անգամ պաղ ջրով լավ լվանալ։ Յեթե ձին խմում ե, ապա նրան հարկավոր ե տալ աղաթթվուտով խառնված ջուր (1 գդալ աղաթթվուտ 1 գույլ ջրի մեջ)։ Պետք ե խուսափել բերանը վորեն դեղ լցնելուց։ Ավելի բարդ ոգնություն կարող են ցույց տալ միայն անասնաբուժական մասնագետները։

ՄԵՆԻՆԳԻՏ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ։ Մենինգիտը կանխելու հիմնական միջոցը—դա ձիշտ խնամքի, կերակրման և ջրելու կազմակերպումն, և աշխատանքում ձիերին ճիշտ ողտագործումը։ Թույլ և վատ մնված ձիերին պետք ե չափավոր աշխատեցնել։ Ամառը, յերեկվա ամենաշող ժամերին չպետք ե աշխատեցնել ձիերին, այլ այս ժամերն ողտագործել ճաշի ընդմիջումի համար։ Բոլոր ձիերին ամեն որ աղ տալ կամ չոր կերն աղաջրով թրջել։ Ձիերին պահել և արածացնել խոշոր և մանր յեղջուրավոր անասուններից բոլորովին առանձին, վորովհետև կասկածներ կան, վոր յեղջուրավոր անասունները թափուն կերպով կրում են իրենց մեջ մենինգիտի վարակը։

ՄԵՆԻՆԳԻՏԻ ԴԵՄ ՊԱՅՅԱՅՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ։ Մենինգիտի յերևան գալու մասին անոիջապես հայտնել գյուղխորհրդին, անասնաբուժին կամ նրա ոգնականին։

Անասնաբուժական մասնագետների գալուց առաջ, գործադրել այն բոլոր միջոցառումները, վորոնք անցկացվում են բո-

լոր վարակիչ հիվանդությունների դեպքում։ Իսկույն հիվանդներին մեկուսացնել, հականեխել ախոռները, լծասարքերը և այն բոլոր առարկաները, վորոնց կաել են հիվանդ ձիերը։ Առոտատեղերում մենինգիտ հիվանդությունը հայտնաբերելիս, հիվանդներին հեռացնել և տեղափորել մեկուսախներում, իսկ առողջներին քշել ուրիշ արոտավայրերը, իսկ յեթե հիվանդությունը չդադարի, այդ գեպքում հարկավոր ե բոլոր առողջ ձիերին ախոռում կերակրել ու ջրել և տալ չոր կեր։

Մենինգիտից սատկած ձիերի կաշին քերթելը թույլատրվում ե։ Քերթելուց հետո, կաշին աղում են և կերերից ու ձիերից հեռու տեղ են պահում։

Կարանտին կազմակերպելու պարտականությունը դրվում է այն բրիգադի, կոլտնտեսության և գյուղխորհրդի վրա, վարտեղ մենինգիտ և յերեան յեկել։ Կարանտինը վերացվում է ձիերի առողջացման կամ մենինգետից սատկելու վերջին դեպքից 40 որ անցնելուց հետո։

Առողջացած ձիուն հարկավոր ե 15 որ պահել մեկուսիչում և թույլ չտալ աշխատելու։

ՍԻԲԻՐՅԱՆ ԱԽՏ (Сибирская язва)

Սիբիրյան ախտը շատ վտանգավոր հիվանդություն ե և մեծ մասամբ մահով ե վերջանում։

Սիբիրյան ախտով կարող են վարակվել գյուղատնտեսական բոլոր կենդանիները։ Այս հիվանդությամբ վարակվում ե նաև մարդը։

Այս հիվանդությունն առաջանում է կենդանական հատուկ միկրօրից, վորը մտնում է որգանիզմի մեջ։ Այս միկրօրը տարբերվում է նրանով, վոր կարող ե շատ յերկար ժամանակ, նույնիսկ տարիներով, պահվել հողում։ Յեղել են գեպքեր, յերբ անասունը սիբիրյան ախտով վարակվում է այն արոտատեղում, վորտեղ 10 տարի առաջ վատ ե թաղված յեղել այս հիվանդությունից սատկած կովի գիտակը։

Մարդը սիբիրյան ախտով շատ անգամ վարակվում է՝ այդ հիվանդությունից սատկած կամ մորթված անասունի գիտակը, կաշին քերթելիս, կամ նրա կաշին, աղիքը, բուրդը և այլն մըթերքները վերամշակելիս։

Ձիերը վարակվում են գլխավորապես այն կերի միջոցով վորի մեջ այս կամ այն կերպ ընկել և վարակը։ Վարակումը նույնպես տեղի յե ունենում ճանձի և այլ ծծող միջատների

խայթոցի միջոցով, յեթե նրանք խայթելուց առաջ ծծելիս են յեղել սիրիյան ախտով վարակված հիվանդների արյունը կամ նստել են սիրիյախտավոր դիակի վրա:

Հիվանդների վրա այս հիվանդությունը յերբեմն շատ արագ է ընթանում: Հանկարծ բարձր ջերմաստիճան է յերևան գալիս, ձին սկսում է ծակոցներ ըդգալ, նրա հետույքից, բերնից և քթից հոսում է փրփրոտ, մուգ արյուն և ձին 2—3 ժամից հետո սատկում է: Այլ դեպքերում հիվանդությունն ամենաշատը 2—3 որ է տևում: Ձին հրաժարվում է ուտելուց, նրա մարմնում բարձր ջերմաստիճան է առաջանում, ձին քրտնում է, նրա շնչառությունը ծանրանում է: Այսուհետև վողջ մարմին սկսում է դողալ, հետույքից, քթից և բերնից արյունախառ հյութ է հոսում և ձին, ջղային ցնցում. ներ կատարելով, սատկում է: Այսպես է ընթանում սիրիյան ախտը, յեթե վարակումը յեղել է կերի կամ ջրի միջոցով:

Համաձարակը ճանձերի և բուեխների միջոցով ձիու մարմի վրա փոխանցվելու դեպքում ուռուցքներ են առաջանում, շատ հաճախ փորի ներքեմ մասում կրծքի տակը կամ ձվակալի վրա: Այս ուռուցքները, փորոնք բուռնցքից ավելի մեծ են, ըսկը պառակած ամուր, տաք են լինում և ցալ են պատճառում, իսկ հետո սառում են և ցալ չեն պատճառում: Զիերի մոտ սիրիյախտը հաճախ այսպիսի ուռուցքներով է լինում, միջին հաշվով տևում է մի որ և մեծ մասամբ մահով է վերջանում:

Սիրիյան ԱԽՏԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ: Սիրիյան ախտի մասին կասկածելու դեպքում, անհրաժեշտ է խոկույն կանչել անասնաբռութին կամ բուժակին: Նրանք ցույց կտան ոգնություն, վորից սիրիյան ախտով հիվանդացած ձիերի վորոշ մասը կարող է առողջանալ:

Նախ քան անասնաբռութական մասնագետների գալը, հարկավոր է դուրս հանել բոլոր առողջ ձիերին այն ախտուից, վորտեղ հայտաբերվել ե սիրիյան ախտը: Յեթե ձիերի մեջ հիվանդությունը յերևան է յեկել արոտատեղերում, այդ դեպքում չպետք է ոգտագործել այդ արոտատեղը:

Սատկած կենդանիների դիակները, հարզե փռվածքի հետ միասին, պետք է տարվեն անասունների գերեզմանոցը և կաշվի հետ միասին, թաղվեն 2 մետր խորությամբ:

Ախտոները իննամքով հականիսխվում են: Յեթե դիակը պառկելիս ե յեղել բակում կամ արոտատեղում, ապա նրա պառկած տեղի վրա հարզ է փուլում և այրվում, համաձարակը վոչնչացնելու համար:

Այն կողմանառություններում կամ գյուղաբներում, վորտեղ սիրիյան ախտը յերևան է գալիս ամեն տարի, այնտեղ անհրաժեշտ է գարնանը բոլոր կենդանիներին պատվաստել: Պատվաստումը և ձիերին և մյուս կենդանիներին սիրիյան ախտով հիվանդանալուց:

Առանձնապես պետք է հիշել, վոր ախտախոր դիակներից վոյ մի դեպքում չի կարելի կաւեր ինքը յեվ դիակն ոգտագործել վորեվի նապատակով: Այսպիսով համաձարակը տարածվում է կենդանիների և մարդկանց միջի:

ԳԵՂՉՈՒՌՈՒՑՔ (ՄԵՐ)


Գեղձուռուցքը նույնպես ձիերի վարակիչ հիվանդություններ հանդիսանում: Գեղձուռուցքը ձիերն ամենից ավելի հաճախ հիվանդանում են 2-ից մինչև 4 տարեկան հասակում: 4-ից ավելի և 2-ից պակաս տարիք ունեցող աերը շատ քիչ են հիվանդանում:

Այս հիվանդությունն առաջանում է նրանից, վոր ձիու որգանիզմի մեջ մտնում են գեղձուռուցքի միկրոբներ:

Գեղձուռուցքը հիվանդ ձիու քթից հոսող խլնքից և թարախից միկրոբներն ընկնում են կերի մեջ և շրջապատող առարկաների վրա: Առողջ ձիերը, այսպիսի կեր ուտելով կամ իրենց կաշվի ճանգում մասով քովելով կամ քորվելով կամ հոտոտալով այս առարկաներին, վարակվում են:

Գեղձուռուցքը թագուն շրջանը տևում է 4-ից մինչև 8 որ: Այսուհետև յերևան է գալիս բարձր ջերմաստիճան առառ թարախ և հոսում յերկու պնչածակերից, վորն առանձնապես ուժեղ և լինում մատղաշ ձիերի մոտ, յենթածնոտային գեղձերը խիստ ուռչում են, վորը սեղմելիս չափաղանց ցավում են, իսկ շոշափելիս տաք և կակուղ են լինում:

Այս նշանները շատ նման են խլախտի նշաններին: Պետք է կարողանալ տարբերել նրանց: Խլախտի ժամանակ քթի արտահոսումը շատ անդամ միայն մի պնչածակից է լինում և վոչթե այնպիս առատ, ինչպես գեղձուռուցքի ժամանակ: Ծննդի տակ ուռուցքը խլախտի ժամանակ հաճախ մի կողմից և լինում, պաղ, պինդ, շատ ուռած և առանց ցավի: Գեղձու



ՅԱՆԹԱՃԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՂՁՈՒՐՈՒՑՔ

ուռցքի ժամանակ ուռուցքը տաք ե, ցավում ե, թարախակալում, կակղում, պատովում ե և նրանից թարախ ե հոսում։ Յեթե բարդություն չառաջանա, ապա պատովելուց հետո գեղձուուցքն աստիճանաբար փոքրանում ե, անհետանում և ձին 2—3 շաբաթից հետո առողջանում ե։ Սակայն այդ չի նշանակում, վոր բոլոր ձիերն առողջանում են, 100 հիվանդացածներից 4—5-ը սատկում են։ Գլխավորապես սատկում են զեղձուուցքից հետո առաջացած բարդություններից։ Այսպիսի բարդությունների դեպքում բացի յենթաճնուային զեղձերից, կարող են հիվանդանալ նաև ուրիշ որգանները՝ թոքերը, լիարզը, գանգուղեղը և ուրիշները։ Գեղձուուուցքի համաճարակը կարող է տարածվել ամբողջ որգանիզմում և զանազան տեղերում առաջացնել թարախի բորբոքում։ Գեղձուուուցքի այսպիսի ընթացքը վտանգավոր է համարվում և հաճախ մահով է վերջանում։

ԱՄԱՁԻՆ ՈՒՆԻԹՅՈՒՆ։ Գեղձուուուցքով հիվանդ ձիերին առանձնացնում են առողջներից և տեղավորում մեկուսիչում։ Նրանց տալիս են դյուրամարս և հյութալի կեր։ Վորպեսզի ծնոտի տակ յեղած ուռուցքը շուտ հասունանա և կակղի, դրա համար ուռուցքի վրա գնում են տաք սպեզանի, վորը պատրաստում են այսպես։ Վոքը պարկի մեջ լցնում են խոտի կտորտանքներ կամ թեփ, թրջում են յեռացած ջրով, թողնում են մի փոքր սառչի և ապա կապում ուռուցքին, այս բանը որեկան 3—4 անգամ կրկնում են։ Յերբ ուռուցքը հասնելուց ծակվում ե, թարախը սեղմում են և վերքի միջոցով ուռուցքի ներսը լվանում են կրեոլինի, լիզոլի կամ մարգանի թթու կալիումի լուծույթով։ Ուռուցքի վրա կակուղ տեղ հայտնաբերելու դեպքում, չպետք է սպասել, մինչև վոր պարար ծակիի։ Այսպիսի ուռուցքը դանակով պետք է ձեղքել ամենափափուկ և ցածր տեղում (դանակը պետք է լվացվի կրեոլինի լուծույթի մեջ), գուրս պետք է սեղմել նրանից թարախը և ամեն որ լվանալ կերոնիցալ լուծույթներից մեկի միջոցով։

Յեթե հիվանդ ձին գժվարությամբ ե շնչում, հարկավոր ե գրծադրել գոլորշու ներս շնչելը։ Սրա համար ձիու տոպրակի հատակին դնում են խոտի կտորտանքներ կամ թեփ, 1—2 դդալի չափ սրսկում են կրեոլին կամ կուպր և թրջում յեռացած ջրով, ապա տոպրակը հապցնում են ձիու դնչին և այդպես պահում են 10—15 րոպե։

Ներշնչումը կարելի յե գործադրել որեկան 2 անգամ։ Յեռացած ջրով թրջելու փոխարեն, պարկի կամ ձիու տոպրակի ներքեմի ծայրը կարելի յե տեղավորել դուլլի մեջ, վորտեղ լըց-

ված ե մի քիչ տաք ջուր, իսկ տոպրակի վերեկի ծայրը հագնել ձիու դնչին։ Չմուանը ներշնչումը կարելի յե կիրառել միայն տաք շենքում, իսկ ամառը մրսելուց խուսափելու համար, պետք ե զգուշանալ միջանցիկ քամիներից և գոլորշի ներս նշելուց հետո ձիերին սառ ջուր տալուց։

Գեղձուուուցքի ժամանակ նախագդուշացման միջոցառումներին պատկանում են այն բոլոր ընդհանուր միջոցները, վորոնք կիրառվում են մյուս վարակիչ հիվանդությունների ժամանակ։

ՔՈՍ (ԿԵՍՈՒ)

Քոսը — դա ձիու և մյուս կենդանիների կաշվի վարակիչ հիվանդություն է։ Կենդանիներից քոսով կարող ե վարակվել նաև մարդը։

Կաշվի վատ խնամքը, անասնի վատ և ամբավարար մննունդը, ախոռներում կուտակված աղբը և այն ամենաանպաստավոր պայմաններ են ստեղծում քոսի զարգացման համար։

Քոսն առաջ ե գալիս նրանից, վոր կենդանիների կաշվի վրա ընկնում և բնակվում են այնտեղ մանր, հասարակ աչքի համար անտեսանելի միջատներ։ Այդ միջատները կաշվի վրա արագությամբ բազմանում են, նրա մեջ անցքեր են բաց անում, ծծում են արյունը և սաստիկ քոր են առաջացնում, մանավանչ տաք շենքերում և գիշեր ժամանակ։ Զիերը միշտ քորվում են, նիհարում և յեթե բուժական ոգնություն ցույց չտրվի, ապա բոլորովին կնիհարեն և կսատկեն։

Վարակումն առաջ ե գալիս հիվանդ և առողջ կենդանիների փոխադարձ շփումից, նրանից, վոր առողջ ձիերը դիմչում են այն առարկաներին՝ սյուներին, պատերին, ցանկապատերին, ձիակապարանին՝ վորոնց քսվելով՝ քորվել են քոսով հիվանդ ձիերը։ Վարակումն առաջ ե գալիս նաև առողջ ձիերին հիվանդների հետ լծելուց, ընդհանուր տապճակից, խոզանակից, քերիչեց և այլն։ Համաճարակը կարող է փոխանցվել նաև մարդուն, յեթե նա միաժամանակ սպասարկում ե թե հիվանդ և թե առողջ ձիերին։

ՔՈՍԻ ՆՇԱՆՆԵՐԸ։ Քոսի ժամանակ բաշի, ճակատի վրա յեղած մազերի փնջի տակ կամ մորթու այլ տեղերում գոյանում են բշամիկներ։ Ձին այսպիսի տեղերը քոսում ե անկյուններին, մարին կամ պատին, վորպեսզի քորի։ Բշտիկների տեղում գոյանում են կեղեներ և խոցեր։ Այսպիսի տեղերում

ապերը թափվում են, կաշին հաստանում և ծալքեր ե առաջցնում: Յեթե քոսով հիվանդանալու սկզբնական շրջանում վոչ մի միջոց ձեռք չառնվի, ապա նա որեցոր ավելի շատ ե տարածվում կաշվի, վզի, բաշի, կրծքի վրա և այլ տեղերում: Զին անընդհատ քորվում և նիհարում ե:

Ինչքան շուտ միջոցներ ձեռք տունվեն քոսի դեմ, այնքան ավելի հեշտ կլինի նրան բժշկել:

ԱՌԱՋԻՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆ: Հիվանդության տարածումը դադարեցնելու համար, առաջին հերթին անհրաժեշտ է մեկուսացնել հիվանդ ձիերին, հականեխել ձիախոռը, մսուրները, վորտեղ կանգնելիս են յեղել քոսոտ ձիերը, հականեխելնաև տապճակները (ոոոօհ) և լծասարքը:

Հիվանդի վնասված տեղերում և նրանց շուրջը գտնված բուրդը պետք ե խուզել: Խուզված տեղերը կանոնավոր կերպով կանաչ սապոն քսել և մի ամբողջ որ սապոնը թողնել նըրանց վրա: Մի որ անցնելուց հետո (ամառվա տաք յեղանակին, իսկ ձմրանը՝ տաք շենքում) խոզանակի միջոցով սապոնը տաք ջրով մաքրել և թողնել վոր կաշին չորանա: Սրանից հետո մահուդով կամ խոզանակով քսել անասնաբուժական դեղարկում յեղած հետեւյալ գեղերից մեկն ու մեկը:

1. Վերցնում են մի մաս կուպը, այնքան ել փոշիացած ծծումք և խառնում են յերկու մաս կանաչ սապոնի և յերկու մաս դինատուրատի (սպիրտի) հետ:

2. Մի մաս կրեռին խառնում են 10 մաս կանաչ սապոնի հետ:

3. Ջրի մեջ յեփիված ծխախոտի թունդ հեղուկ:

4. Մի մաս նավթ կամ կուպը խառնում են 3 մաս բուսական յուղի հետ:

5. 1 կիլոգրամ արևածաղկի մոխիր՝ մի դույլ տաք ջրի հետ:

Հինգ որից հետո նորից պետք ե քսել: Յեթե վնասված տեղերը շատ են, ապա պետք ե խուսափել միանգամից բոլոր տեղերի վրա մահլամ քսելուց, (կարող ե թունավորում առաջ գալ): Սկզբում մահլամը քսում են մնասված տեղերի մի մասի վրա, իսկ հաջորդ որը՝ մնացած մասի վրա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածականի փոխարեն	3
Առողջ և աշխատանակ ձիու համար	7
Անասնաբուժական դեղարկու	9
Առողջ ձիու նշանները	10
Հիվանդ ձիու նշանները	11
Ինչպես վարվել հիվանդ ձիու հետ	12
Ինչպես պառկեցնել ձիուն	12
Առաջին ոգնությունը ներքին հիվանդության դեպքում	14
Ատամոքսային ծակոցներ	14
Փորկապություն	16
Փորհարություն	17
Մեզի կապվելը	17
Հազ	18
Բույսերից թունավորվելը	19
Առաջին ոգնությունն արտաքին հիվանդությունների դեպքում	21
Սրյանահոսություն	21
Վերքեր	22
Հարվածներ	23
Ճնշում	23
Առաջին ոգնությունը վոսկորների ջարդվածքի դեպքում	24
Ինչպես կախել ձիուն	25
Առաջին ոգնությունը կազարու գեպքում	25
Սմբակների հողացավային բորբոքումը	25
Սմբակի ծակվելը	26
Մեխանարում	27
Վանահարք	27
Սմբակի թարախակարումը	28
Սմբակի սլաքի թարախակարումը	29
Սմբակի արորվածք	29
Խոնավխառ	30
Առաջին ոգնությունը ծննդյան ժամանակ	31
Սրգանդապատի ուղիղ դրությունը	32
Սրգանդապատի սխալ դրությունը	35
Վարակիչ հիվանդություններ	37
Վարակիչ հիվանդությունների պատճառները	40
Խլախտ	42
Մենինգիտ	45
Սիրիոյան ախտ	47
Գեղձուուցք	49
Քու	

Ответственный редактор Г. А. ПОТЕНЦ

Сдано в набор 21/II 1934 г,
Издание с-х 141/3719
Статформат А5-148x210,
Уполномочен Б—285

Тех. редактор О. ТЕР ДАВЫДОВ

Подписано в печать 4/III 1934 г,
Об'ем 3 $\frac{1}{4}$ печ, лист
Заказ № 1105
Тираж 1500

Тип. им. „Стачки 1902 г.“ АЧКПО Ростов н-Дону

ՀՀ Ազգային գրադարան



NL0283083

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.
Цена 50 Коп.

6775

8459

На армянском языке

А. О. Долгашев
ПЕРВАЯ ПОМОЩЬ
ЗАБОЛЕВШЕЙ ЛОШАДИ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАДЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

ԳՐԱԴԱՐԱՆ
ՕՊԱՏՈՎ-ԴՊՆ ՍՊԱԿՎԱԿԱՑ ՓՈՂ. 53
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿԵՐՊՈՅԱՅՐ)